

Ապրիլ ամիսը Հայ ժողովրդի պատմության մեջ

1 ապրիլ

1878 Կրաստանի Շուլավեր գյուղում ծնվեց Մովսես Արազին (Հարությունյան) «Իսրայել Օրի» վեպի, «Արելը» պատմվածքի հեղինակը: (Վախճ. 1964թ.-ին)

1918 Վանա անկախ կառավարությունը և ժողովուրդը պաշարվելով թուրք և քուրդ ուժերի կողմից նահանջում է Իրաք:

1920 Մարաշի, Հանճընի, Ուրֆայի հայազրկումից հետո քենալականները պաշարեցին Կիլիկիայի Այնթապ քաղաքը: 15-օրյա հերոսական պաշտպանության շնորհիվ 18 հազար այնթապցի հայեր թեև փրկվեցին բնաջնջումից, սակայն ֆրանսիական զորքերի հեռանալուց եւ Կիլիկիան քենալականներին հանձնելուց հետո, 1921 թվականի վերջին ստիպված եղան գաղթել Սիրիա:

1938 Սկսվեց ԽՍՀՄ ՊԿ հայկական մասնաճյուղի առաջին գիտական նստաշրջանը:

1984 Թուրքիայի ճնշման տակ Կանադայի կառավարությունը տեռորի ենթարկեց Տորոնտոն հայտարարելով, որ «հայ տեռորիստները» նախաձեռնել են քաղաքի մետրոյում ռումբի տեղադրել, բայց ռումբ չհայտնաբերվեց: Կանադական ոստիկանության ուժերի կողմից մերժվեց հայտնաբերման իրական փաստը «Ազգ ային անվտանգության» պատրվակով:

1993 Քելբաջարի շրջանի ազատագրման գործողության ընթացքում հայկական ուժերի առաջապահ գունարտակը գ լավեց Քելբաջար քաղաքը:

2 ապրիլ

1848 Անհայտ կորավ Խաչատուր Աբովյանը: (Ծնվ. 1809թ.-ին):

1921 Երևանի ազատագրումը դաշնակցական խռովարարներից:

3 ապրիլ

1921 ՀԽՍՀ Հեղկոմի հրամանը «Հայրենիքի փրկության կոմիտեի» տապալման, նրա անդամների ձերբակալման և ամբողջ հանրապետության մեջ խորհրդային իշխանությունը վերականգնելու մասին:

1990 Ընդունվեց ԽՍՀՄ-ի օրենք «ԽՍՀՄ-ի կազմից խորհրդային հանրապետությունների դուրս գալու ընթացակարգի մասին», որն ինքնավար մարզերին թույլ տվեց դառնալ անկախ այն հանրապետությունից, որի կազմում եղել են, թե տվյալ հանրապետությունը ԽՍՀՄ-ի կազմից դուրս է եկել:

1997 Լիբանանի Հանրապետության խորհրդարանը բանաձև ընդունեց, ապրիլի 24-ը հռչակելով հայ ժողովրդի դեմ գործադրված կոտորածների հիշատակի օր:

4 ապրիլ

1820 Վանի Այգեստան թաղամասում ծնվեց հայ հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային գործիչ Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ): (Վախճ. 1907թ.-ին, Էջմիածնում):

1920 Շուշիի հայերի կոտորածը:

1995 Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Գարեգին Ա-ն: Նա դարձավ Ամենայն հայոց 131-րդ հայրապետը:

5 ապրիլ

1840 Բոլնիս-Խաչեն գյուղում ծնվեց նշանավոր մանկավարժ, գրող, հրապարակախոս Ղազարոս Աղայանը: (Վախճ. 1911թ.-ին):

1882 Ծնվել է հեղափոխական գործիչ Կամոն (Սիմոն Տեր-Պետրոսյան): (Սպանվել է 1922 հուլիսի 13-ին):

7 ապրիլ

1858 Շամախում ծնվեց գրող, դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեն: (Վախճ. 1935թ.-ին, Կիսլովոդսկում):

1915 Վանի հերոսամարտի սկիզբը:

8 ապրիլ

1975 ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը բանաձև (թիվ 148) ընդունեց 1975 թ. ապրիլի 24-ը «Մարդու կողմից մարդու նկատմամբ ամենադժարային վերաբերմունքի հիշատակման ազգ ային օր» հայտարարելու մասին:

1997 ԱՄՆ-ի կոնգրեսականները Ջորջ Ռադանովիչը և Դեյվիդ Բանիերը կոնգրեսին ներկայացրեցին օրենսդրական նախագ իծ, կոչանելով հատուկ բանաձև ընդունել հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին:

9 ապրիլ

1920 Թիֆլիսում տեղի ունեցավ Անդրկովկասի երեք հանրապետությունների խորհրդաժողովը, որտեղ քննարկվեց նաև Ղարաբաղի հարցը:

1932 Կազմակերպվում են Հայաստանի խորհրդային զորոների միությունը, խորհրդային Հայաստանի երաժիշտների միությունը, խորհրդային կարիչների ու կերպարվեստի աշխատողների միությունը և խորհրդային ճարտարապետների միությունը:

1994 Սկսվեց Արցախյան պատերազմում ԼՂՀ Պաշտպանության բանակի հարձակողական վերջին Արեգասարի գործողությունը, որի ընթացքում հայկական ուժերը լիովին ազատագրեցին Մարտակերտի շրջանի Մատաղիս-Չայլի-Թալիշ հատվածը:

1999 Դեսպան Սթյուարտ Էյզենսթաթը, այն ժամանակ տնտեսագ իտության, գ ործարարության և գ յուղատնտեսության հարցերով ենթաքարտուղար, իր երաշխավորագ իր նամակում խոստացավ, որ վարչությունը հարց կբարցոացնի Թուրքիայի հանրապետությանը, Իմպերիալական Օսմանյան բանկի կողմից հայերին կփոխհատուցվի ցեղասպանության ժամանակ բռնագ լավված արժեքները:

10 ապրիլ

1922 Հիմնադրվեց Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերությունը:

1938 Խորեն Ա. կաթողիկոսը խեղդամահ եղավ համայնավար չեկիստների ձեռքով:

11 ապրիլ

1865 Ծնվել է բանաստեղծ, թարգմանիչ Ալեքսանդր Օստրոյանը:

1915 Սկսվեց հայերի ինքնապաշտպանական կռիվները Տարոնում:

1919 Յոզղաթի հայությանը կոտորելու ծանր հանցանքով Կ. Պոլսի «Մուլթան Բայագետ»-ի հրապարակում կախաղան բարձրացվեց Յոզղաթի մութասարիֆի տեղակալ Քենալ բեյը:

2001 «Նյու Յորք Լայֆ Ինշուրենս» ապահովագ ռական հայտնի ընկերությունն ի վերջո համաձայնել է բավարարել հայերի տասնամյակներ շարունակվող պահանջները և 10 մլն. դոլար վճարել ցեղասպանության զոհերի իրավաժառանգ որդիներին:

12 ապրիլ

1866 Սարատովի նահանգի Կամիչին գյուղաքաղաքում վախճանվեց հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: (Ծնվ. 1829թ.-ին):

1904 Սասնա ապստամբության Լաճկանի կռիվը Սեբաստացի Մուրադի ղեկավարությամբ:

1913 Ծնվել է երգիչ Նար Հովհաննիսյանը (Նար-Դոսի որդին):

13 ապրիլ

1386 Լենկ-Թեմուրի զորքը գրավում է Թավրիզը, ապա մտնում Սյունիք, գրավում Նախիջևանը, պաշարում Երնջակի բերդը, ասպատակում Մեծ ու Փոքր Սյունիքները և Այրարատը:

1827 Ռուսական զորքերը գրավում են Էջմիածինը:

1866 Վանում ծնվեց գրող, հրապարակախոս Կրթանես Փափազյանը: (Վախճ. 1920թ.-ին, Երևանում):

1889 Պետերբուրգում վախճանվեց պատմաբան, հրապարակախոս և բանաստեղծ Գաբրիել Պատկանյանը: (Ծնվ. 1802թ.-ին):

1917 Մահացավ բանաստեղծ, թարգմանիչ Ալեքսանդր Օստրոյանը:

1918 Խորհրդային Ռուսաստանի կառավարության բողոքի հեռագիրը թուրքական բանակի դեպի Անդրկովկաս առաջ շարժվելու և խաղաղ բնակչությանը բնաջնջելու առթիվ:

1920 Սկսվեց Դրոյի 45-օրյա դարաբաղյան ռազմարշավը:

1942 Հայաստանում ձևավորվում է 408-րդ հայկական հրաձգային գումարտակը:

1984 Ապրիլի 13-16-ը Փարիզում տեղի ունեցավ ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանը, որը քննարկեց հայերի

ցեղասպանության հարցը: Ընդունվեց հայերի ցեղասպանությանը դատապարտող որոշում:

14 ապրիլ

1828 Նիկոլայ I-ը պատերազմ է հայտարարում Թուրքիային:

1860 Շուշիում ծնվեց պատմաբան Լեոն (Առաքել Բարախանյան): (Վախճ. 1932թ.-ին, Երևանում):

1864 Ծնվեց տաղանդավոր բանաստեղծ Յովհաննես Յովհաննիսյանը: (Վախճ. 1929թ.-ին):

1909 Գահընկեց արվեց սուլթան Աբդուլ Համիդը. Իշխանությունն անցավ երիտթուրքերի ձեռքը:

1978 Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդի նստաշրջանը հաստատեց Հայկական ԽՍՀ սահմանադրությունը (Հիմնական օրենքը):

1990 Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման ընդունեց հայտարարություն «1915-1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»:

15 ապրիլ

1915 Թալիաթի, Էմվերի և Նազըմի ստորագրությամբ գաղտնի հրաման ուղարկվեց տեղական իշխանություններին արևմտահայության տեղահանության և բնաջնջման վերաբերյալ:

16 ապրիլ

1918 Թիֆլիսում լույս է տեսնում «Տեղեկատու» օրաթերթը առաջին խորհրդային թերթը հայերեն:

1953 Երևանում մահացավ ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Հրայր Աճառյանը: (Ծնվ. 1876թ.-ին):

1984 Մարդկանց մշտական միջազգային տրիբունալը ճանաչեց հայերի ցեղասպանությունը:

17 ապրիլ

1922 Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը ահաբեկեցին «Թեշքիլաթը մախսուսեթ»-ի նախագահ Բեհադդին Շաքիրին և Տրապիզոնի նախկին նահանգ ապետ Ջեմալին:

1997 Նոր Հարավային Ուելսի (Ավստրալիա) խորհրդարանի օրենսդիր համագ ումարը որոշում կայացրեց ապրիլի 24-ը սահմանել հայերի ցեղասպանության հիշատակի օր և առաջարկություն ներկայացվեց Ավստրալիայի դաշնային կառավարությանը ընդունել նույնանման որոշում:

18 ապրիլ

1877 Ռուսական զորքերի երևանյան ջոկատը գեներալ Տեր-Ղուկասովի ղեկավարությամբ, հայ աշխարհագրոյինների հետ միասին 12 օրվա ընթացքում գ ռավեց Բայազետ քաղաքը:

19 ապրիլ

1895 Կ. Պոլսում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները Օսմանյան Թուրքիայի կառավարությանը ներկայացրին հայկական վեց վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու «Մայիսյան ծրագիր»-ը:

1920 Սան-Ռեմոյում (Իտալիա) տեղի ունեցած Անտանտայի պետությունների խորհրդաժողովում առաջարկություն եղավ ԱՄՆ-ի նախագ ահ Վ. Վիլսոնին ստանձնելու Հայաստանի մանդատը (հոգատարությունը):

1990 Կիպրոսի խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:

2000 Վախճանվեց գեղանկարիչ Գրիգոր Խանջյանը: (Ծնվ. 1926 թ. Երևանում)

20 ապրիլ

1884 Ծնվեց հայ բանաստեղծ, գրական հասարակական գործիչ Դանիել Վարուժանը: (Վախճ. 1915թ.-ին)

1915 Վանի հերոսական ինքնապաշտպանությունը: (Տևեց մինչև մայիսի 19-ը):

1965 Ուրուգվայի Արևելյան հանրապետության ծերակույտի և ներկայացուցիչների Պալատի միացյալ ժողովում ընդունվեց օրենք հայ նահատակների հիշատակի օրվա առթիվ:

1994 Ռուսաստանի դուման (Ռուսաստանի երկպալատային կանոնադրության տունը) քվեարկեց հայերի ցեղասպանությունը ճանաչելու հարցը:

22 ապրիլ

1918 Անդրկովկասյան սեյմը Անդրկովկասը հայտարարեց անկախ:

1921 Ալեքսանդրապոլի ազատագրումը թուրքական զավթիչներից:

1981 Նախագահ Ռեյգընը իր համար 4838 հռչակագրում մասնավորապես հայտարարել է. «Ինչպես Հայոց եղեռնը նախկինում, Կամպուչիայի եղեռնը դրանից հետո, այնպես էլ դրանց նման ուրիշ ժողովրդների չափից շատ հալածանքները ցեղասպանության դասեր են, որոնք երբեք չպետք են մոռացվեն»:

1997 ԱՄՆ-ի սենատի հայկական համախմբման դահլիճում նշվեց հայոց մեծ եղեռնի 82-րդ տարելիցը, որը կազմակերպել էր սենատոր Ջեյ Ռիդի, և կոնգրեսականներ Ջո Նոլենբերգ ի, Մարտին Նիկոնի, Դեյվիդ Բանիերի և Ջորջ Ռադանովիչի մասնակցությամբ ստեղծված հանձնախումբը:

23 ապրիլ

1965 Մեծ եղեռնի 50-ամյակի նախօրեին Ֆրանսիայի Ազգ ային ժողովի ծախ թևի մի խումբ պատգամավորներ հանդես եկան հայերի 1915 թվականի ցեղասպանությունը դատապարտելու առաջարկությամբ:

1985 Արգենտինայի Ազգային կոնգրեսը միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:

1985 Հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշում ընդունեց Ուրուգ վայի Ազգային համագումարը:

1990 Կանադայի համայնքների պալատը քննարկեց «Մարդու կողմից իր մերձավորին ցույց տրվող անմարդկային վերաբերմունքի մասին» հարցը: Առաջարկություն ներկայացվեց հայերի 1915թ. ցեղասպանության 81-րդ տարելիցի կապակցությամբ. սահմանել և յուրաքանչյուր տարի 20-ից 24-ը նշել մարդու կողմից իր մերձավորի նկատմամբ թույլատրված հանցագ ործության հիշողության շաբաթ:

24 ապրիլ

1915 Հայ քաղաքական, կրոնական և մտավորական գանգվածների ներկայացուցիչները, թվով 800 մարդ, ձերբակալվեցին Կ. Պոլսում, տեղահանվեցին դեպի Անատոլիայի խորքերը և մահվան դատապարտվեցին: Սկիզբ դրվեց հայոց Մեծ եղեռնին:

1965 Աշխարհի մոտ 25 երկրներում նշվեց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը և հարգանքի տուրք մատուցվեց անմեղ զոհերի հիշատակին: Էմիգրանտ մայր տաճարի բակում կանգ նեցվեց հուշարձան: Մեծ եղեռնի զոհերի հիշատակին հուշարձան կանգ նեցվեց նաև Կալիֆորնիա նահանգ ի Մոնթբերեյլո հայահոծ քաղաքում:

1968 Խաղաղասեր ուժերի Համաշխարհային կոնգրեսը 64 երկրների և 16 միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ նշեց հայերի ցեղասպանության մասին:

1973 Ֆրանսիայի Մարսել քաղաքում կանգնեցվեց հուշարձան 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

1975 Հունաստանի մայրաքաղաք Աթենքում, Իտալիայի Միլան քաղաքում, ինչպես նաև Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի մոտակայքում գտնվող Բիզֆայա գյուղում տեղի ունեցան 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների բացումը:

1978 Ֆրանսիայի Լիոն քաղաքում կանգնեցվեց հուշարձան Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

1984 Փարիզի Ալֆրովիլի շրջանում կանգ նեցվեց հուշարձան Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

1987 Գերմանիայի Շտուտգարտ քաղաքում կանգ նեցվեց խաչքար հուշարձան Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

1989 Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում կանգ նցվեց հուշարձան Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

1990 ԱՄՆ-ի նախագահ Բուշը հայտարարությամբ բոլոր ամերիկացիներին կոչ արեց ապրիլի 24-ին միանալ հայերին հարգելով ավելի քան 1 մլն. զոհերի հիշատակը:

1994 ԱՄՆ-ի նախագահ Զլինտոնը հայտարարություն հեռարձակեց կոչ անելով հիշատակել 1915 թ.-ի հայ ժողովրդի ողբերգ ությունը:

25 ապրիլ

1888 Թիֆլիսում վախճանվեց հայ գրականության դասական Դաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյանը): (Ծնվ. 1835թ.-ին Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում):

1918 Թուրքական բանակը գրավեց Կարսը:
1918 Բաքվում կազմվում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ Ստ. Շահունյանի գլխավորությամբ:

1990 Հունաստանի խորհրդարանը օրենք ընդունեց «Ապրիլի 24-ը որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշողության օր սահմանելու մասին»:

26 ապրիլ

1904 Անդրանիկի գլխավորությամբ տեղի ունեցավ Սեմալի մեծ կռիվը (Սասնա ամաստանությունը), որտեղ ընկավ Հրայրը (Արմենակ Ղազարյանը): (Ծնվ. 1864 թ.):

27 ապրիլ

1915 Ծնվեց հայ բանաստեղծ Հովհաննես Շիրազը: (Վախճ. 1984թ.-ին):

1919 Կ. Պոլսում սկսվեց երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարությունը:

1994 Իսրայելը պաշտոնապես դատապարտեց հայերի ցեղասպանությունը: Իսրայելի արտաքին գործերի նախարար Յոսի Բեյլինը Նեսեթի ի պատասխան Թուրքիայի դեսպանի հավաստագրումներին հայտարարեց. «Դա պատերազմ չէր, այլ սպանող և ցեղասպանություն, մի բան, որ աշխարհը պետք է հիշի»:

28 ապրիլ

1921 Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը 1,5 միլիոն ռուբլի (ոսկով) վարկ է բաց թողնում Խորհրդային Հայաստանին:

29 ապրիլ

239 Ծնվեց հայ եկեղեցական-քաղաքական գործիչ Գրիգոր Լուսավորիչը: (Վախճ. 326թ.-ին):

1945 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան մասնակցում է Բեռլինի կողոպցային համառո մարտերին:

30 ապրիլ

1947 ԱՄՆ-ում հրավիրվեց համաշխարհային հայկական կոնգրես:

1981 Միացյալ Նահանգների ցեղասպանությունների հիշատակման խորհուրդը, անկախ դաշնային գործակալությունը միաձայն որոշեցին, որ Միացյալ Նահանգների ցեղասպանությունների հիշատակման թանգարանում պետք է ընդգրկվի նաև հայկական ցեղասպանությունը և դա արվեց:

Լուրեր

Իրանահայ համայնք

- **Կրոնական դասախոսություն** **ԵՆ Ժողովրդական հանդիպում Արաքում**

Մարտի 13-14-ին Արաքում էր գտնվում Ս. Կոմիտաս քին. Ղարախանյանը, որը Արաքի Ա. Մեսրոպ եկեղեցում կատարեց արարողություններ, դասախոսություն և հավուր պատշաճի քարոզ:

- **Հաղորդագրություն** **Նոր Հուլայի հիմնադրման 400-ամյակի առիթով**

Ի հետևումն մեր նախորդ հաղորդագրության տեղի ունեցավ Նոր Հուլայի հիմնադրման 400-ամեակի տոնակատարության երկրորդ խորհրդակցական նիստը, որտեղ հաստատվեց տոնակատարությունների նախագիծը ըստ հետևյալի.

- 1 - Ն. Հուլայում կայանալիք ձեռնարկներ
- 2 - Համաիրանական ձեռնարկներ
- 3 - Սփյուռքեան ձեռնարկներ, որոնց գործադրման համար նկատի են առնվել հանդիսությունների, հրատարակչության, ցուցահանդեսների և գիտական մտաշրջան-դասախոսությունների ենթահանձնախմբեր:

Նշանակվեց նաև կենտրոնական հանձնախումբ, որը մոտ օրերս հրապարակելու է իր անդրահիկ հաղորդագրությունը:

ԴԻԲԱՆ ՍՊԱՅԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 47-ՐԴ ՊԱՏՎԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Իրան

- **ԹՈՒՐԵԻԱՆ ԵՒ ԻՐԱՆԸ ԻՐԱՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՕԳՏԻՆ**

ԹԵՐՐԱՆ, 27 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիան և Իրանը հանդես են գալիս Իրաքի տարածքային ամբողջականության պահպանման օգտին, ինչպես նաև կոչ են անում համաշխարհային հանրակցությանը ջանքեր գործադրել «մարդկային ողբերգությունը» կանխելու համար: Այդ մասին այսօր կայացած հեռախոսազրույցի ընթացքում հայտարարել են Իրանի և Թուրքիայի արտգործնախարարներ Քամալ Խարազին և Աբդուլլահ Գյուլը:

Ինչպես նշվում է պաշտոնական հաղորդագրության մեջ, զրույցի ընթացքում ընդգծվել է, որ երկու կողմերը «ընդհանուր մտահոգություն ունեն իրաքյան ճգնաժամի վերաբերմամբ»:

Հայաստան

- **ՍՏԵՂԾՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ**

ԵՐԵՎԱՆ, 20 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մարտի 20-ի ՀՀ կառավարության նիստում որոշում է կայացվել երկրում գործող 5 պետական արխիվների հիման վրա ստեղծել Հայաստանի Ազգային արխիվը: 10 մարզերում և Երեւանում ստեղծվել են ազգային արխիվի մասնաճյուղեր, իսկ նախկին 30 տարածաշրջաններում ներկայացուցչություններ: Այս մասին նիստից հետո բրիֆինգի ժամանակ լրագրողներին հայտնեց Արխիվային գործի գործակալության պետ Ամատուն Կիրաբյանը: Նշվեց նաև, որ Հայաստանում արխիվային գործը սկսվել է 1923թ.կից և մինչև 1960 թ. եղել է մեկ պետական արխիվ: Դրանից հետո ստեղծվել են ֆունկցիոնալ, այսինքն՝ գիտատեսնիկական փաստաթղթերի, նշակույթի, գրականության և արվեստի ու այլ արխիվներ:

- **Այցելություն Եղիշե Չարենցի հուշարձան**

ԵՐԵՎԱՆ, 13 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բանաստեղծը նա է, ով իր երկրային կյանքն ավարտելուց հետո չի հեռանում երկրային շնչառությունց, իր կյանքով ու գործով շարունակում է մշտապես մնալ



ժողովրդի հիշողության դաշտում: Այդպիսի բանաստեղծ անցյալ դարում ողբերգաբար վախճանված Եղիշե Չարենցը Աբգարի Սողոմոնյան-1897-1937 թ.թ.), որի ծննդյան 106-րդ տարեդարձը մարտի 13-ին նշվեց

Երեւանում, օղակաձեւ զբոսայգում նրան նվիրված հուշարձանի (հեղինակ Նիկոլայ Նիկողոսյան) մոտ:

Հանդիսությունը կազմակերպել էին Հայաստանի գրողների միությունը, Երեւանի քաղաքապետարանը և պետական համալսարանը, որոնց անունից հուշարձանի պատվանդանին ծաղիկներ ու ծաղկազամբյուղներ դրվեցին: Եղիշե Չարենցի կյանքի ու անմար ստեղծագործության մասին խոսք ասացին գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, Երեւանի պետական համալսարանի պրոֆեսոր, գրականագետ Սամվել Սուրդյանը, Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Լիլիթ Հակոբյանը, ուսանողներն արտասանեցին Չարենցի և սեփական բանաստեղծություններից:

Այսօրվա մեր հավաքը մեծ խորհուրդ ունի, ԱՐՄԵՆՊՐԵՍԻ թղթակցին ասաց Լեւոն Անանյանը: Կատարվում է Չարենցի երազանքը, գարնանային երգեհոնի պես զոնգացող այսօրվա մեջ, փաստորեն, վերահաստատվում է Չարենցի իղձը. հավաքվել են ոսկեհեր աղջիկներին ու զանգրահեր տղամները եւ ապացուցում են, որ իրավ է Չարենցը, երբ պատգամել է «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Դժվար է Չարենցի արյունակիցը կամ ժառանգը լինել, ասաց մեծ բանաստեղծի թոռը դուստր Արփենիկի գավակ Արմեն Չարենցը. «Ուզած թե չուզած, մենք կրում ենք Չարենցին մեր մեջ, մենք կիսում ենք նրա ճակատագիրը իր անցյալով ու ներկայով: Մեր երակներում շրջանառվում է Չարենցի հոգեւոր զգացողության արյունը: Ամեն երեւոյթ մեր կյանքում բխում է Չարենցյան զգացողության կետից: Ափսոսում են, որ մայրս վատառողջ էր եւ չկարողացավ ներկա լինել այս փառահեղ հանդիսությանը»:

Հանդիսության մասնակիցների մի մասը մեկնեց Չարենցի տուն-թանգարան դիտելու առաջիկայում բացվելիք նոր ցուցադրության որոշ գործեր:

• **ԱՄՆ-Ը ԱԿՏԻՎԱՑՆԵԼՈՒ Է ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՄԱՎՈՂ ԳՆՏՅՈՒՄ**

ԲԱՔՈՒ, 14 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ-ը մտադիր է ակտիվացնել իր միջնորդական դերակատարությունը եւ արակցություն ցուցաբերել ԵԱՀԿ Մինսկի խմբին այնպիսի առաջարկությունների մշակման հարցում, որոնք կարող են դառնալ դարաբաղյան հակամարտության կարգավորման «նոր հիմք» Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահական ընտրություններից հետո: Այս մասին հիմնադրաբար հայտարարել է Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռոս Ուիլսոնը, Բաքվի սլավոնական համալսարանի դասախոսների եւ ուսանողության հետ հանդիպման ժամանակ: Ըստ Ուիլսոնի, տվյալ հարցը հանգամանորեն քննարկվել է Վաշինգտոնում ԱՄՆ եւ Ադրբեջանի նախագահների հանդիպմանը: Ինչպես նշել է դեսպանը, պետքարտուղար Քոլին Փաուելը նախագահներին տեղեկացրել է այն քայլերի մասին, որ նա կձեռնարկի առաջիկա ամիսներին: Համաձայն Բաքվի «525» թերթի, դեսպանը հույս է հայտնել, որ դարաբաղյան խնդրի վերաբերյալ նոր առաջարկները կիրառործվեն երկու երկրների նախագահական ընտրություններից հետո:

• **ՀԻՆ ՋՈՂՈՒՅՑՈՒՄ ՀՐԵՇԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ՈՉՆԱՅՐՆԵԼ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ 10 ՀԱՁԱՐ ՀՅՈՒՆԱՐՉԱՆՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ, 26 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամբողջ 20ևրդ դարում, հատկապես՝ դարավերջին, եւ 21ևրդ դարասկզբին ամբողջովին ոչնչացվել են Նախիջեանում գտնվող Հին Ջուղայի (Ադրբեջանի անվանական նենգափոխմամբ՝ Ջուլֆա) հայկական գերեզմանատան 10 հազար հուշարձանները, որոնք մաս են կազմում համաշխարհային մշակութային արժեքների: Այս մասին խոսվեց մարտի 26ևին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացած «Հին Ջուղա. կորուսյալ զանձեր» գիտաժողովում, որը նախաձեռնել էին Հայաստանի մի շարք կազմակերպություններ: Բացման եւ ողջույնի խոսքերով հանդես եկան գերաշնորհ տեր Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանը, Մերոպ արքեպիսկոպոս Աշճյանը, ՀՀ ԳԱՄ փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանը, ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը:

Ձեկուցումներով հանդես եկան եւ մտքերի փոխանակությանը մասնակցեցին ճանաչված պատմաբաններ, արվեստաբաններ, ազգագրագետներ, ճարտարապետներ Հայաստանից, դոկտոր Արմեն Հախնազարյանը (Գերմանիա), որոնք բազմակողմանի տեսանկյուններից արծարծեցին խնդիրը, միաժամուռ պնդելով, որ հուշարձանների բնաջնջումն Ադրբեջանի քաղաքականության մասն է կազմում:

Գիտաժողովի մասնակիցներն ընդունեցին հայտարարություն, որում մասնավորապես ասված է, որ չնայած հայաստանյան պետական եւ հասարակական, ինչպես նաեւ տարբեր միջազգային

պետական կազմակերպությունների, այդ թվում ՀՈՒՆԵՍԿՕ-ի ահազանգումներին, 2002 թ. տարեվերջից հայ քրիստոնյա մշակութային հուշարձանների ոչնչացումը վերսկսվել է ավելի հրեշավոր չափերով:

Գիտաժողովի մասնակիցները դիմեցին ՀՀ կառավարությանը, Արտաքին գործերի նախարարությանը, աշխարհի երկրներում գործող ՀՀ դիվանագիտական առաքելություններին միջազգային օրենքների եւ օրինականության սահմաններում ձեռնարկել հնարավոր բոլոր քայլերը դատապարտելու եւ կասեցնելու Ջուղայի հուշարձանախմբի վերջնական ոչնչացումը:

• **Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐԸ ՀԻՍՏՈՓՎԱԾ Է, ՔԱՆԶԻ ԱՅԼ ՄՊԱՍԵԼԻՔՆԵՐ ՈւՆԵՐ ՄԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՑ**



Մ. Նահանգները շարունակելու է համազործակցությունը Հայաստանի հետ, չնայած նախագահական ընտրությունները մեր երկրում համարում է միջազգային չափանիշներին անհամապատասխան: Երեկ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Օրդուեյը մամլո ասուլիս էր հրավիրել, ինչպես ինքը մեկնաբանեց, «հերթական անգամ ՁԼԱՆների հետ շփվելու համար, այնպես որ որեւէ հայտարարություն չունենք»:

Պատասխանելով լրագրողների հարցերին՝ դեսպանը նշեց, թե ժողովրդավարության զարգացման ուղղությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունները հաշվի առնելով, իրենք հույս ունենին, թե նախագահական անցած ընտրությունները կլինեին մեկ քայլ առաջ: «Դրանք չէղան քայլ առաջ: Ու մենք հիասթափվեցինք, քանի որ այլ սպասելիքներ ունեինք», ասաց ԱՄՆ դիվանագիտական առաքելության ղեկավարը վստահեցնելով, որ իր երկրի պետքարտուղարության հայտարարությունը մեր ընտրությունների վերաբերյալ հիմնվում է ԵԱՀԿ դիտորդական առաքելության եզրակացության եւ «մեր դիտարկումների վրա»:

Լուրջ ընտրախախտումներից Ջ. Օրդուեյը մատնանշեց «քվեատուփերի մեջ մեծ թվով քվեաթերթիկներ լցնելու փաստը»: Լրագրողներից մեկն այստեղ նկատեց, թե ընտրությունները զանաառող հայտարարություններից տպավորություն է ստեղծվում, որ քվեաթերթիկներ լցրել են միայն հաղթած թեկնածու Ռոբերտ Քոչարյանի օգտին: «Մեր մտահոգությունը եղել են ազատ եւ արդար ընտրությունները: Մենք չենք ուզում անել եզրակացություն, թե այս կամ այն թեկնածուի օգտին է լցվել: Բայց լցնելու փաստն ինքնին կասկածի տակ է դնում ընտրությունների գործընթացի վստահելիությունը»:

Բայց ԱՄՆ-ը շարունակելու է Հայաստանի հետ երկարաժամկետ համազործակցության ծրագիրն ու աշխատելու է երկրի այսօրվա կառավարության, նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: «Սպասվո՞ւմ է արդյոք ԱՄՆ նախագահի շնորհավորական ուղերձը մեր նախագահին վերընտրվելու առիթով» հարցին դեսպանը պատասխանեց. «Չեն կարող խոսել նախագահ Բուշի անունից եւ ասել, թե երբ եւ ինչ կուղարկի նա նախագահ Քոչարյանին»:

Ընդդիմության հետագա գործընթացներն, ըստ ԱՄՆ դեսպանի, պիտի կրեն խաղաղ բողոքի բնույթ՝ ՀՀ սահմանադրության շրջանակներում: Հետագայում ամսվել ժողովրդավարական ընտրություններ ունենալու համար իշխանություններն էլ, Օրդուեյի համոզմամբ, պիտի հետամուտ լինեն ընտրախախտումների հեղինակներին պատասխանատվության ենթարկելու գործին: «Նաեւ պիտի վերանայել Ընտրական օրենսգիրքը: Ի վերջո, իշխանությունները պիտի վճռականություն

ցուցաբերեն թույլ չտալու համար նման խախտումներ թե՛ մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններին, թե՛ հետագա ընտրական գործընթացների ժամանակ»:

Եթե այս ընտրություններն էլ «համապատասխանեին միջազգային չափանիշներին եւ չվիճարկվեին որեւէ կողմից, ապա Հայաստանի համար ավելի լայն հնարավորություններ կստեղծվեին, այդ թվում եւ ԼՂ խնդրի առունով»:

Վերջինիս վերաբերող հարցերին պատասխանելով ամերիկյան դիվանագետը նշեց, թե ԼՂ ստատուս քվոյի կարգավիճակի փոփոխման համար թե՛ հայաստանյան, թե՛ աղբյուրային հաստատվածություններում ներքին համաձայնություն է հարկավոր, «իսկ դրա համար ուժեղ, օրինական իշխանություններ են անհրաժեշտ»:

ԼԻԼԻԹ գրիգորՅԱՆ-ԱԶԳ

Հայոց Ափյուռք

- **ՕԳՆԵՏԷՔ ԻՐԱՔԱՅՈՒԹԵԱՆ**
- **Անտր մնացած հայ գաղութ մը**

Բաղդադից ստացված այս ահագանգը կարիք չունի որեւէ բացատրության: Պատերազմի անմիջական վտանգը տագնապեցնող է նաեւ իրաքահայության համար, որ գրկված լինելով ազգային կուսակցությունների եւ կազմակերպությունների առաջնորդությունից, բացառապես եկեղեցուն է հառել իր հույսի հայացքը:

Մինչդեռ թեմակալ առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանը, ինչպես հաստատում են մեր աղբյուրները, հունվար ամսից ի վեր գտնվում է Մ. Նահանգներում...

Պատերազմի օրը կը մօտենայ եւ Իրաքի մէջ ամենէն աւելի սարսափ կայ: Կր վախճանք մեր տունը, տեղը, ընտանիքները կորսնցնել: Ո՞վ մեզի պիտի օգնէ, եթէ պատերազմը սկսի: Այս բոլորին վրայ յուսահատական է մեզի համար մեր հոգեւոր առաջնորդին Աւագ Սրբազանին բացակայութիւնը: Կ'ըսեն որ Ամերիկա կը գտնուի եւ պատերազմը վերջանալէն յետոյ պիտի գայ: Հովիւը իր հօտին քովը պէտք է ըլլայ, երբ վտանգ կայ: Ոչ թէ ձգէ ու երթայ: Ամենայն հայոց կաթողիկոսը պէտք է ստիպէ, որ մեր առաջնորդը այս դժուար օրերուն մեր քովը ըլլայ: Մայր Աթոռը պէտք է հոգ տանի մեր ժողովուրդին: Ամբողջ գաղութը այսօր առանց գլուխի մնացեր է: Օգնական վարդապետն ալ Հայաստան գացեր է: Ո՞վ տէր պիտի ըլլայ մեզի մեր ցաւին մէջ: Գաղութը ամբողջ անտէր է: Օգնեցէք իրաքահայութեան:

ՍԵՊՈՒՅ

- **ՕԳՆԵՏԷՔ ԻՐԱՔԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ**

Պատերազմը երթալով աւելի կը զօրանայ: Բայց կ'ըսեն աւելի գէշ պիտի ըլլայ վաղը, միւս օրը: Ամեն մարդ իր տունին մէջ է եւ կը սպասէ ե՛րբ ռունք պիտի իյնայ: Պայթիւնի ծայները շատ ուժեղ կու գան եւ ամբողջ շէնքը կը ցնցեն:

Ձեզի գրած էի, որ մեր հոգեւոր առաջնորդ Աւագ սրբազանը Յունուար ամիսին ի վեր մեզ լքած է եւ Ամերիկա կը գտնուի: Հիմա ո՞վ է մեր պատասխանատուն: Լուրերէն ըսին, թէ Հռոմի պապը իր դեսպանին յանձնարարեր է Բաղդադ մնալ եւ ժողովուրդին օգնել: Այսօր հեռաձայնեցինք եւ ստուգեցինք որ Տէր Հայրն ալ ընտանիքին հետ պիտի գնէ: Աս ի՞նչ տեսակ հոգեւորականներ են: Այսչափ հայութիւն կայ հոս, բայց ոչ մէկ գլուխ չկայ: Շատ հայեր Աման եւ Սուրիա գացին: Բայց ով որ կ'երթայ աստեղէն, անոր տունը կը պարպեն: Այսօր միայն դուրս ելանք հաց գնելու եւ հիմա նորէն սկսաւ կռիւը: Լաւ է լոյս կայ եւ հեռաձայնի գիծ. գոնէ լուր կու տանք մեր մասին հայ ժողովուրդին, աշխարհի չորս կողմը: Ամերիկայի «Ասպարեզ» թերթէն օտ line կարդացի, որ մեր սրբազանը եղեր ետ պիտի գայ: Չենք հաւատար: Ինչպէ՛ս պիտի գայ, հոս կրակ կը թափուի ամէն տեղ:

Օգնեցէք մեզի որ այս պատերազմը դադրի: Ամէն տեղ թող զրեն եւ կանգնեցնեն պատերազմը:

ՍԵՊՈՒՅ 3ԱԿՈՒԲԵԱՆ

- **Իրաքահայ հոգեւոր առաջնորդը վերադառնում է**

ԼՈՆԴՈՆ, 28 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Իրաքահայ համայնքի հոգեւոր առաջնորդ Ավագ Ասատուրյանը 28օրյա այցով գտնվում էր Լոնդոնում: Հանդիպելով

Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռովան Ուիլիզմսի եւ Էլյունմենի հարցերով հոգեւորական Ջոնաթան Գուզի հետ՝ նա քննարկել է Իրաքում տիրող իրադրությունը եւ համայնքային խնդիրներին առնչվող հարցեր: Ուիլիզմսը հայ հոգեւորականին է փոխանցել բոլոր քրիստոնյաներին, այդ թվում եւ իրաքահայերին ուղղված խաղաղության ուղերձը: Նա հավաստել է, որ բանակցում է բրիտանական կառավարության հետ Իրաքի ժողովրդին մարդասիրական օժանդակության կազմակերպման հարցի առնչությամբ:

Մինչ այդ իրաքահայ առաջնորդը գտնվում էր ԱՄՆ-ում եւ հանդիպել է Նյու Յորքի եւ Չիկագոյի կաթողիկէ կարդինալների, Քրիստոնյա եկեղեցիների ազգային խորհրդի անդամների հետ:

Ասատուրյանը Լոնդոնից արդեն մեկնել է Դամասկոս, որտեղից նա կանցնի Բաղդադ:

- **«ԻՐԱՔԱՅՈՒԹԵԱՆ ՎՆԱՍ ԿՐԵԼ»**

Հավաստեց Հայաստանում Իրաքի ժամանակավոր հավատարմատարը

«Իրաքում բնակվող հայերին պատերազմական գործողություններից մինչեւ հիմա վնաս չի պատճառվել», «Ազգին» տված հարցազրույցում ասաց Հայաստանում Իրաքի Հանրապետության ժամանակավոր հավատարմատար Թարիք Մուհամմադ Յահյանը նշելով, որ իրենք հատուկ ուշադրությամբ հետեւում են իրաքահայության ճակատագրին: Ըստ դիվանագետի, հայկական ամենամեծ համայնքները Բաղդադում, Մոսուլում եւ Կիրկուկում են, եւ շատ քիչ ընտանիքներ են, որ այս օրերին թողել են Իրաքը: Ժամանակավոր հավատարմատարը փաստում է, որ Իրաքից Հայաստան միգրացիա չկա, կան ժամանակավոր տեղափոխված որոշ ընտանիքներ:

Թարիք Մուհամմադ Յահյայից փորձեցինք իմանալ, թե որքան է խաղաղ բնակչության աստիճանը զոհերի թիվը հաշվի առնելով այս մասին հաղորդվող տարբեր տվյալները: Դիվանագետը բերեց ընդամենը մի քաղաքում մեկ օրվա ընթացքում հետեւանքները. «Բասրայում միայն մեկ օրվա ընթացքում 62 մարդ է մահացել, 200-ից ավելի Բասրայի բնակիչներ վիրավորվել են: Քանի օր արդեն շարունակվում է խաղաղ բնակավայրերի աստիճանը ընթացքում: Ամերիկա-բրիտանական կոալիցիայի վարչակազմը կարծում էր, թե Իրաքի ժողովուրդն իրենց ցնծությամբ ու ծաղիկներով կդիմավորի, երկիրն էլ շատ հեշտ կգրավեն: Դիմադրություն անսպասելի էր, ու այժմ իրենց ծախողումները կոտորում են խաղաղ ժողովրդի գլխին ասասկացնելով ընթացքում»:

Դիվանագետը խոսեց նաեւ իրաքյան պատերազմի պատճառների մասին: «Հիմնական գործոնը նավթն է, կասկած չի կարող լինել: Պատճառն Իրաքի նախագահին հեռացնելը չէ, ոչ էլ զանգվածային ոչնչացման գեներլ ենթադրելի առկայությունը: Այժմ Բուշն ու Բլեթը բացահայտ խոսում են պատերազմի իրական պատճառների մասին: Նավթի պաշարներով աշխարհում երկրորդ երկիրը գրավելով, Մ. Նահանգները փորձում է տարածաշրջանում իշխանություն, նավթի շուկայում գներ հաստատել: ԱՄՆ-ին դա նոր տնտեսական թափ կարող է հաղորդել»:

Անդրադառնալով իրաքյան պատերազմի վերաբերյալ մեր երկրի դիրքորոշմանը, դիվանագետական ներկայացուցիչն այն անվանեց համարձակ քայլ, որն արժանացել է Իրաքի կառավարության եւ ժողովրդի հարգանքին ու գնահատանքին: «Հայաստանն իր հստակ «ոչ»-ն ասաց պատերազմին, եւ դա պատահական չէր. հայ ազգը քաղաքակիրթ է, հատուտ իր պատմությամբ եւ մշակույթով»:

- **ԵՎՐՈՊԱՅԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԱՔՐ ԿԱՅՆՑՎԱԲ ԲՐԱՏԻՍԼԱՎԱՅՈՒՄ**

Մարտի 21-23-ը Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայի արտգործնախարարության «Սյուզա» հյուրանոցի խորհրդատուների դահլիճում տեղի ունեցավ Եվրոպահայ մամուլի առաջին ֆորումը ԵՅՄՖ-ի հովանավորությամբ: Լրագրողական այս հավաքին մասնակցեցին 10 երկրներից ժամանած մոտ 20 մամուլի ու լրատվության ասպարեզի ղեկավարներ, խմբագիրներ, լրագրողներ:

Հավաքին մասնակցելու ցանկություն հայտնած ավելի քան երկու տասնյակ լրագրողներ չկարողացան մասնակցել Իրաքի դեմ սանձազերծված պատերազմի, ինչպես նաև Հայաստանում սկսված խորհրդարանական նախընտրական պայքարի, ֆինանսական, կազմակերպչական մի շարք դժվարությունների ու թերացումների պատճառով: Սակայն առաջին փորձը հավաքվել է քննարկել եվրոպահայ մամուլի այսօրվա խնդիրները, կարծես թե ստացվեց: Ֆորումի աշխատանքների ավարտին ընդունվեց բանաձև եւ կազմվեց 9 հոգուց բաղկացած աշխատանքային հանձնախումբ:

• ԱՄԵՐԻԿԱՅՈՒՆ ԳՈՐԾԱՐԱՐԻ ԱՌԱՏԱԶՆՈՆ ԵՎ ԻՎՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վաշինգտոնում իր ակտիվ գործունեությամբ հայտնի ամերիկահայ գործարար Ջեյմս Քեշիշյանը հայկական հին գորգերի իր եզակի հավաքածուն նվիրել է Վաշինգտոնում բացվելիք Հայոց ցեղասպանության թանգարանահուշակենտրոնին, տեղեկացնում է Ամերիկայի հայկական համագումարի Ազգային ինստիտուտի լրատվական գրասենյակից ստացված հաղորդագրությունը: Հավաքածուն, որը գնահատվում է մոտ 1 մլն դոլար, ընդգրկում է ավելի քան 100 նախշավոր գորգեր, որոնց մի մասը Ցեղասպանությունը վերապրած հայուհիների ձեռքի գործն է:

Քեշիշյանը, որը Չեկի Չեյսուն (Մերիլենդ) գորգագործությամբ է զբաղվում, հայկական գորգերի ճանաչված մասնագետներից է եւ արվեստի նրբություններ սովորել է իր հորից՝ Մարկ Քեշիշյանից: Վերջինս առաջին անգամ Լոնդոնում է բացել «Քեշիշյան արվեստի գորգեր» վաճառատունը, իսկ տնտեսական լճացման տարիներին տեղափոխվել է Մ. Նահանգներ, որտեղ իր հաճախորդների թվում են եղել Սպիտակ տան պաշտոնյաներ: Ջեյմսն ընդլայնել է ընտանեկան բիզնեսը եւ 1980-ին հիմնել Հայկական գորգերի ընկերությունը ուսումնասիրություններ կատարելու եւ փաստական տվյալներ հավաքելու նպատակով: 1994-ին հրատարակել է իր հեղինակած գիրքը հայկական գորգագործության մասին: Մոտ 30 տարի նա եղել է Հայկական համագումարի հոգաբարձուների թվում եւ մարտի 1-ին այդ վարչության կազմակերպած ընդունելության ժամանակ ջրմուռ գնահատանքի է արժանացել իր առատածեղն նվիրատվության համար:

«Հայկական համագումարի, Հայ ազգային ինստիտուտի եւ Հայոց ցեղասպանության թանգարանահուշակենտրոնի անունից խորին շնորհակալություն ենք հայտնում այս արտակարգ նվիրատվության եւ Հայաստանին ու հայ ժողովրդին անսակարգ նվիրվածության համար», նշել է Ազգային ինստիտուտի կառավարիչների վարչության նախագահ Ռոբերտ Գալստյանը: Քեշիշյանը շնորհակալություն հայտնելով ավելացրել է, որ հավաքածուն սիրո արդյունք է եղել եւ ուրախ է, որ այսուհետեւ այն ապաստան կգտնի Վաշինգտոնի Հայոց ցեղասպանության թանգարանում:

Սիջազգային

• ԸՆԴԱՔԱՎԱՆ ԿՈՍՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինտերնետային ցանցով ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ մարտի 3-ին «Թըրքիշ դեյլի նյուս» օրաթերթը հրապարակել է Թուրքիայի ազգային մեծ ժողովում (խորհրդարանում) ներկայացված բոլոր քաղաքական կուսակցությունների համատեղ հայտարարությունը, որը դատապարտում է Եվրախորհրդարանի որոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Ելույթ

ունենալով պատգամավորների առաջ, փոխնախագահ Յուքսեմ Յալովան կարողացել է համատեղ հայտարարությունը, որտեղ ասված է եղել:

«Տասնհինգ երկրների խորհրդարանականներից բաղկացած Եվրախորհրդարանը հարգարժան կառույց է, բայց պատմական հայտնի փաստերն անտեսելով, հայկական անհիմն պնդումների վերաբերյալ Թուրքիայի պատմությանը, պետությանը ու ազգությանը վնասող որոշում ընդունելը նրա կողմից պարզապես արատավորում է այդ որոշումն ընդունողների հեղինակությունը: Այդ որոշումը բացարձակապես անհիմն է եւ դժբախտաբար Թուրքիայի հանդեպ Եվրախորհրդարանի անարդար վերաբերմունքի առաջին արտահայտությունը չէ: Ավելին, նման որոշման ընդունումը հենց Եվրոպական համագումարի բացման օրը (որտեղ պետք է թուրք խորհրդարանականների մասնակցությամբ քննարկվեր Եվրամիության ապագան) հստակորեն ուղղագծում է այն մտադրությունը, որն անընդունելի է: Եթե այս անոթալի քայլը կատարված է Թուրքիայի դեմ այն հույսով, որ Թուրքիան հրաժարվի Եվրամիությանն անդամակցելու իր մտադրությունից, ապա մեր պարտականությունն ենք համարում հայտարարելու, որ չարաչար սխալվում եք: Թուրքիան մեծ ջանքեր է գործադրել եւ զոհողություններ կատարել իր բոլոր կառույցներում եւ հատկապես խորհրդարանում, որպեսզի Եվրամիության լիիրավ անդամ դառնա: Պատմությունը չի կարելի նենգափոխել քմահաճ որոշումներով: Ավելի քան քառասուն տարի սկսած սառը պատերազմի օրերից, Թուրքիան հսկայական ջանքեր է ի գործ դրել համատեղ պաշտպանության շրջանակներում պաշտպանելու ազատությունն ու տարածքային ամբողջականությունն այն երկրների, որոնք այսօր այս անարդար որոշումն են ընդունել մեր դեմ: Եվրախորհրդարանի վերաբերմունքը չափազանց վշտացնող է: Բայց միեւնույն է, որոշումը չի օգնելու նրանք: Հույսով ենք, որ մի օր արխիվները կբացվեն պատմաբանների առաջ, եւ նրանք այնպիսի փաստեր կհայտնաբերեն, որ անոթանքի սյունին կգամեն այս որոշումը ընդունողներին: Եվրախորհրդարանի այս քմահաճ որոշմանը Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատասխանը լինելու է պատմական փաստերի հրապարակումը: Իսկ այդ փաստերը մեր օգտին են»: Այս հայտարարությունը, ըստ հաղորդագրության, հոտնկայա ծափահարություններով է ընդունվել պատգամավորների կողմից: Յալովան նաև ժխտել է Եվրախորհրդարանի այն պնդումները, որ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն ինքն ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը խորհրդարանի 1921 թվի ապրիլի 10-ի նիստի իր ելույթում: Յալովան ասել է, որ խորհրդարանը նիստերը գումարել է ապրիլի 9-ին եւ 11-ին եւ նման ելույթ չի եղել: Իսկ ապրիլի 10-ին ընդհանրապես նիստ չի գումարվել:

• «Մ. ՆԱՅԱՆՆԵՐՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՒՄ Է «ՄԵԾ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՒԷԼԻԹ ԾՐԱԳԻՐԸ»

Իրաքյան պատերազմն, ինչպես ենթադրվում է, կհանգեցնի աշխարհաքաղաքական նոր փոփոխությունների ու զարգացումների, որոնք անմիջական ազդեցություն կունենան մեր երկրի վրա: Ստորեւ ներկայացնում ենք ԳԱ ակադեմիայի արելեյագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Յովհաննիսյանի դիտարկումներն իրաքյան խնդրի շուրջ:

Եւ Իրաքյան պատերազմի հետեւանքով աշխարհաքաղաքական ինչպիսի փոփոխությունների հորձանուտում կարող է հայտնվել Հայաստանը:

Մերձավոր Արեւելքն այրում է իր հերթական ճգնաժամը, սակայն այս ճգնաժամը շատ զօտերով տարբերվում է նախորդներից: Եթե 40-ական թթ. վերջերից սկսված ճգնաժամը լայն առումով կարելի է դիտարկել որպես արաբահարայնական կոնֆլիկտ, իսկ ավելի նեղ առումով պաղեստինահարայնական, ապա այս մեկն ուրիշ է, այստեղ աշխարհի զլխավոր գերտերությունը կոնֆլիկտի մեջ է մտել մերձավորարեւելյան տարածաշրջանի մի պետության՝ Իրաքի հետ, որը սովորաբար դասվում է միջին պետությունների շարքը:

Բնականաբար հարց է ծագում, թե ո՞րն է պատճառը, ինչու է այս բոլորը տեղի ունենում: Հրապարակի վրա են այն տեսակետները, որ այստեղ հիմնականը նավթի գործուն է, կան նաև տեսակետներ, որ մեծ դերակատարում ունեն հարայելը եւ հրեական լոբբին, որոնք ցանկանում են Մ.Սահանգների ձեռքով լուծել Իրաքի հարցը, այլ կերպ ասած նաև իրենց ազգային անվտանգության հարցը: Չթերագնահատելով այս գործոնների առկայությունը եւ նշանակությունը, իմ կարծիքով, դրանք բավարար հիմք չեն տալիս խնդիրը հասկանալու եւ բացատրելու համար: Իմ խորին համոզմամբ այս բոլորի արմատները պետք է փնտրել եւ գտնել այն նոր համաշխարհային կոնցեպցիայի մեջ, որ Մ.Սահանգներում մշակվեց 90ական թթ. վերջերին, երբ արդեն հորհրդային Միության փլուզումը, համաշխարհային սոցիալիզմի համակարգի վերացումը եւ սառը պատերազմի ավարտն իրողություն էին: Եվ ահա ստեղծված պայմաններում Մ.Սահանգներում մշակվեց այն գլոբալ տեսությունը, որ Սահանգները ոչ միայն աշխարհի միակ գերտերությունն է (այդ կարգավիճակը նրան չի բավարարում), այլև միակ լիդերն է աշխարհի եւ կոչված է աշխարհը տանել իր հետեւից, իսկ աշխարհի մնացած երկրներն էլ այս կամ այն չափով պետք է հետեւեն ամերիկյան քաղաքականությանը: Սահանգներում որոշակի նոր հասկացողություններ ու հայեցակարգեր, որոնք հիմնարար են այսօրվա միջազգային հարաբերությունների համար: Սա դրանք բաղկացուցիչ մասն էր նաև, այսպես կոչված, Մեծ Մերձավոր Արեւելքի ծրագիրը, որի մասին ես առիթ եմ ունեցել հանդես գալու «Ազգի» էջերում: Այդ ծրագիրն առաջ քաշվեց 1996-97 թթ., երբ մենք գտնվում էինք Իսրայելում: Ծրագրի հիմքում ընկած էր հետևյալ գաղափարը. հորհրդային Միության փլուզումից հետո նախկին հետսովետական տարածքում վակուում է առաջացել, եւ այժմ հնարավորություն կա ստեղծելու մի նոր աշխարհաքաղաքական մակրոռեգիոն, որը նրանք անվանում են Մեծ Մերձավոր Արեւելք: Դրա բաղկացուցիչ մասերն են Կենտրոնական Ասիան 5 պետություններով, ներառյալ Ղազախստանը, երկրորդը Անդրկովկասը Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, երրորդը Մերձավոր Արեւելքի արաբական երկրները եւ Իսրայելը, եւ չորրորդը, ինչպես իրենք են անվանում, Արեւմտյան Ասիան, որը բաղկացած է Իրանից եւ Թուրքիայից:

Դժվար չէ նկատել, որ այս տեսության հետեւում կանգնած է Մ.Սահանգները, մասնավոր իր այդ մակրոռեգիոնի առաջացման համար հիմնասյուներ են Իսրայելը եւ Թուրքիան, որոնց ապավինելով Մ.Սահանգները պետք է իրականացնի այդ գործողությունները: Իրաքի այսօրվա ճգնաժամին պետք է մոտենանք այս տեսանկյունից, որ Մ.Սահանգները փաստորեն տեսությունից անցել է արակտիկայի աշխարհի վերակառուցումը համաձայնեցնելով իր այն կոնցեպցիային, թե ինքն է աշխարհի լիդերը եւ ինքն է սահմանում աշխարհի զարգացման հիմնական ուղղությունները, որտեղ բոլորն այս կամ այն չափով պետք է ենթարկվեն իրեն, իսկ եթե ոչ, ապա դիտվում են թշնամի, եւ նրանց դեմ կարող է համապատասխան գործողություններ իրականացնել: Իրաքը հենց այն ռեժիմն է, որը չի ենթարկվում Մ.Սահանգներին եւ վարում է իր ինքնուրույն արտաքին քաղաքականությունը: Այս տասնյակ տարիների բոլոր հորդորները, որ Իրաքը հրաժարվի իր քաղաքական գծից եւ հետեւի ամերիկյան քաղաքականությանը, անցան ապարդյուն: Մ.Սահանգների եւ Իրաքի հարաբերությունները փաստորեն կարելի է ասել, որ 3 փուլ անցան: Առաջին փուլում Մ.Սահանգներն առաջարկեց Իրաքի լրիվ զինաթափում, եւ երբ Իրաքն ինչևոր չափով սկսեց կատարել, առաջ քաշվեց ներկրող տեսակետը, որ Սադդամ Հուսեյնը պետք է հրաժարական տա եւ երկու որդիների հետ հեռանա Իրաքից: Իսկ հիմա արդեն երրորդ փուլն է, այսինքն եթե անգամ վերջին առաջարկը կատարվեր, միեւնույն է Մ.Սահանգները պետք է հարձակվեր Իրաքի վրա: Այսպիսով, հասկանալի դարձավ, որ Մ.Սահանգների գերագույն նպատակն իրաքյան ռեժիմը փոխելն է:

դրա փոխարեն մի նոր Իրաք ստեղծվել, որը կիստեւի Մ.Սահանգների հրահանգներին: Դա կհանդիսանա կարելուր քալը Մեծ Մերձավոր Արեւելքի ծրագրի իրագործման ճանապարհին, որից հետո կլուծվի եւ նավթի հարցը, եւ այս կամ այն չափով նաև Իսրայելի հարցը:

Ուրեմն մենք տեսնում ենք, որ կարող է ստեղծվել մի նոր աշխարհաքաղաքական իրադրություն: Դա ըմբռնեցին աշխարհի բոլոր երկրները, ուստի այն երկրները, որոնք այսօր պաշտպանում են Իրաքին, իրականում ոչ թե վերջինիս են պաշտպանում, ոչ թե այնտեղ գոյություն ունեցող ռեժիմը, որն իրոք դիկտատորական է եւ շատ դաժանություններ է ցուցաբերել, այլ հանդես են գալիս ամերիկյան այս քաղաքականության դեմ, որ ինքն իրեն հռչակելով աշխարհի միակ լիդերը, ստիպում է, որ աշխարհի մյուս երկրները մեծ թե փոքր, հետեւեն այս քաղաքականությանը:

Սիւսի թե ինչու մեծ երկրները չհանդուրժեցին դա: ՄԱԿի Անվան մշտական 5 անդամներից 3-ը՝ Ռուսաստանը, Չինաստանը, Ֆրանսիան, նրանց միացել է Գերմանիան, եւ աշխարհի մեծ երկրների մեծ մասը չի պաշտպանում ամերիկյան այդ քաղաքականությունը: Փաստորեն, նրանք որոշեցին մարտահրավեր նետել Սահանգներին, կամ իրենց կիսաջողվի կանգնեցնել Մ.Սահանգներին, կամ էլ Իրաքին կհաջորդեն այլ երկրներ: Մենք գիտենք, որ Բուշն ունի այն երկրների ցուցակը, որոնց համարում է չարիքի առանցք, եւ որոնց պետք է կամ դուրս գցի այդ առանցքից, կամ նրանց տեղն ինչևոր նոր ուժեր դնի: Այս փոփոխությունը կանդրադառնա ողջ աշխարհի վրա, այդ թվում մեր տարածաշրջանի: Բնական է, որ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող ոչ մի փոփոխություն աննկատ չի անցնի մեր երկրի կողքով:

Ինչպե՞ս կազդեն այդ փոփոխությունները: Այն մտահոգությունը, թե կարող են տնտեսապես ազդել, հիմնադրուկ է, քանի որ դրանք ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված կապեր են: Եվ սարսափելի ոչինչ չկա: Մեզ համար ավելի կարելու է այն համոզմանը, որ այդ ռեգիոնի վերակառուցման գործում առաջատար դեր է հատկացվում Թուրքիային, որը հրաժարվում է դիվանագիտական հարաբերություններ հաստատել մեր երկրի հետ եւ հավակնություններ ունի դառնալու տարածաշրջանի գերտերություններից մեկը: Եթե դա իրականանա, պարզ է, որ մեր աշխարհաքաղաքական վիճակը ոչ թե կլավանա, այլ ընդհակառակը:

- Աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային վտանգավոր զարգացումներում ինչպիսի՞ դիրքորոշում կունենան Իրանը եւ Ռուսաստանը:

Իհարկե, ճիշտ չէ վերոհիշյալ փոփոխությունները կենտրոնացնել Հայաստանի վրա, քանի որ դա ձեռնտու չէ ոչ միայն մեզ, այլև Իրանին եւ Ռուսաստանին: Այդ պարագայում կգործի Ռուսաստան-Հայաստան-Իրան առանցքը, կգործի նաև Արեւմտյան Եվրոպան: Եթե նրանք հիմա այսքան ուժեղ դիրք են գրավում Իրաքի խնդրում, ապա Իրանի հարցում նրանց հակազդեցությունն ամերիկյան քաղաքականության վրա անհամեմատ ավելի կուժեղանա: Եթե այս փոփոխությունը կատարվի այնպես, ինչպես մենք ենք պատկերացնում, դա բացառաբար կանդրադառնա Հայաստանի վրա, թեև, կարծում են, խուճապի մատնվելու ոչ մի առիթ չկա: Ընդդիմ Հայաստանի ղեկավարության վերջին 2-3 տարիների վարած քաղաքականության Հայաստանի միջազգային դիրքերը բավական ամուր են, անվտանգության հարցերն ավելի լավ են լուծված, քան Վրաստանինը եւ Ադրբեջանինը: Նկատի ունեն նաև այն հանգամանքը, որ գոյություն ունի հայառուսական փոխօգնության պայմանագիրը, Հայաստանը կոլեկտիվ անվտանգության կազմակերպության անդամ է, բավականին զարգացել ու բարելավվել են ՆԱՏՕ-ի եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունները: Այսպիսով, Հայաստանի անվտանգությունը հենվում է 4 սյուների վրա, որոնք նրան ավելի կայուն են դարձնում: Չմոռանաք նաև, որ Հայաստանում կա ռուսական բազա: Իսկ եթե հանկարծ Թուրքիայի դերակատարումն ավելի ակտիվանա, եթե նրան թույլ տան մտնել Հյուսիսային Իրաք, ինչպես ինքն է պահանջում, քրդական

պետության ստեղծումը կանխելու համար, ապա խիստ բացասաբար կանդիդատնա տարածաշրջանի վրա:

- *Իսկ ինչպիսի՞ սպառնալիքներ կարող են հնչել ի վնաս դարաբաղյան հիմնահարցի լուծման:*

- Եթե Թուրքիայի ազդեցության շառավիղը մեծանա, դա որոշ չափով բացասաբար կանդիդատնա նաեւ Ղարաբաղի հարցի վրա: Թուրքիայի պաշտպանության ավելացումը Մ. Նահանգների կողմից, բնական է, որ դժվարություններ կստեղծի դարաբաղյան հարցի համար: Թեեւ չեն կարծում, որ դրանք լուրջ լինեն, որովհետեւ ԵԱՀԿ 3 համանախագահներից Ռուսաստանը եւ Ֆրանսիան թույլ չեն տալիս, որ Թուրքիան մտնի Եվրամիություն: Այնպես որ, Թուրքիայի վիճակն այդքան լավ չէ, շատ խնդիրներ ունի եւ պետք է լրջորեն մտածի իր ապագայի մասին:

- *Չափազանց վտանգավոր իրավիճակում են այսօր հայտնվել Սերձավոր Արեւելքի հայկական գաղթօջախների եւ հատկապես Իրաքի հայերը: Վերջիններս մի կողմից չեն կամենում լքել իրենց տունն ու տեղը, մյուս կողմից մեծ տագնապ են ապրում իրենց սպառնազոդ վտանգից: Ձեր կարծիքով ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն:*

- Սերձավոր Արեւելքում այսօր ապրում է մոտ կես միլիոն հայություն, գլխավորապես Սիրիայում, Լիբանանում, Հորդանանում, Եգիպտոսում եւ, իհարկե, նաեւ Իրաքում մոտ 15-20 հազար հայեր: Իրաքահայության կյանքին սպառնազոդ հարցն արդեն քննարկվել է Հայաստանի արտգործնախարարությունում: Հայաստանն այսօր պատրաստ է նրանց ընդունել: Սա ոչ թե հունանիստական քայլ է, այլ խոսում է այն մասին, որ Հայաստանն ինքնուրույն, անկախ պետություն է եւ կատարում է ամենայն հայոց պետության ֆունկցիան ամբողջ հայության համար: Ես շատ լավ ծանոթ եմ իրաքահայության վիճակին, քանի որ աշխատանքի բերումով 3 անգամ եղել եմ Իրաքում, ծանոթ եմ համայնքին, նրա աշխարհիկ եւ կրոնական գործիչներին: Կարծում եմ, որ դա մեր կազմակերպված համայնքներից մեկն է, եւ տեղի իշխանություններն էլ հարգանքով են վերաբերվում նրան: Հիշում եմ 1972 թ. դեկտեմբերին Իրաքի նախկին նախագահ Ահմադ Հասան ալ Բաքրի ջերմ խոսքերը հայերի մասին, որոնք հայտնի բժիշկներ են, ինժեներներ, գիտնականներ եւ նաեւ արհեստավորներ: «Մենք շատ բարձր ենք գնահատում հայերին եւ որեւէ օգնության դեպքում առաջին հերթին դիմում ենք միմիայն հայերին: Կարող եք հանգիստ լինել, որ այստեղ իրաքահայությանը ոչ մի վտանգ չի սպառնում», դիմելով ինձ ասաց նա:

Ինչ վերաբերում է մյուս երկրներին, կարծում եմ, որ այնտեղ բնակվող հայերին որեւէ վտանգ չի սպառնում, անգամ Լիբանանի հայությանը, որտեղ կան որոշ ուժեր, որ կարող են միջամտել երկրի ներքին գործերին: Կարծում եմ, գործնականում հայերի կյանքին, ունեցվածքին որեւէ սպառնալիք չկա, թեեւ պետք է աշխուրջ լինենք, որ կարողանանք օգնության ձեռք մեկնել նրանց, որովհետեւ ոչ ոք չգիտի, թե հարձակումից հետո ինչ զարգացումներ կլինեն:

Հարցազրույցը վարեց ՌՈՒՀԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ՋԵՆԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(1)

ԵՐԿՈՒ ԽՈՍԲ

Ներկայումս, երբ այլեւս Ջեմալ փաշայի սպանության համար հետապնդման եւ պատասխանատվության վտանգ չկա, հրապարակ են գալիս բազմաթիվ ինքնակոչ սուտ հերոս-տեռորիստներ, որոնք հնարելով գանազան ստապատիր պատմություններ, իրենց մեծ վերագրում այդ նշանավոր տեռորի կատարման պատիվը... Որով արժանանում են մեր ժողովրդի մեծարարներին...

Ավելին: Ոմն Ներսիսյան, մի ամբողջ «աշխատություն» է ներկայացրել Հայաստանի Պետական Պատմության Արխիվ, որի մեջ առանց խղճի խայթ գզալու, անանթաբար «պատմում» է, ավելի ճիշտ՝ զրպարտում է, թե ինքը սպանել է Ջեմալին մեր պարտիայի ականավոր առաջնորդներ Ս. Օրջոնիկիձեի, Ա. Մյասնիկյանի, Գ. Աթաբեկյանի եւ այլնի հանձնարարությամբ...

Ամենայն հավանականությամբ այդ էժանագին պատվագողին, այդ յուրատեսակ մաքսանեցզին հայտնի չէ, որ նախկին Պետքաղվարչության արխիվներում կան անհերքելի փաստաթղթեր, որոնց մեջ ամենայն մանրամասնությամբ արձանագրված են Ջեմալի սպանության մանրամասն պարագաները եւ հեղինակները:

Ես, որպես քաջածանոթ Ջեմալի սպանության կազմակերպման ու իրականացման մանրամասնությունների եւ այդ տեռորի իսկական հեղինակների հետագա ճակատագրին, իմ քաղաքագիական պարտքն եմ համարում մեր ժողովրդին պատմել ամբողջ ճշմարտությունը: Այժմ, այսինքն 1965 թվականին, իմ կարծիքով, արդեն կարելի է անել այդ...

Ոչ թե միայն նրա համար, որպեսզի ստոր ինքնակոչների ու պատվագողների հերյուրանքներն հերքվեն ու իրենք էլ դիմակագեթծ լինեն կամ դրանց նմանների հետագա հնարավոր ոստնձություններից գեթծ մնա իսկական հերոսների պայծառ հիշատակը, այլ նրա համար, որպեսզի մեր պատմության մի փոքրիկ, բայց փառավոր էջը հայտնի լինի մեր ժողովրդին, մեր խիզախ երիտասարդությանը...

Թող իմանան, թե ովքեր էին այն հերոսները, որոնք երիտասարդ կյանքի գնով իրենց հարազատների կյանքը վտանգի ենթարկելու գնով վրիժառու եղան մեծ մարդասպանից, որով իրենց սրբազան պարտքը կատարեցին մեր միլիոնավոր նահատակների հանդեպ:

« Հայերը երկաթով բնաջնջվեցին, Սիրիացիները անթուրությամբ պիտի բնաջնջվեն... »

ՋԵՆԱԿ ՎԱՅԱ

Ջեմալ փաշան, որին պանիսլամական շրջանակներում մեծարում էին «ԻՍԼԱՄԻ ԱՌՅՈՒԾ» տիրողոսով, Օսմանյան կայսրության կառավորող դիկտատուրայի երրորդության (Էնվեր, ԹԱԼԵՍԹ, ՋԵՄԱԼ) անդամ էր, պատերազմի սկզբին՝ ծովային նախարար, ապա, հայկական կոտորածների ամբողջ ժամանակ Թուրքիայի Հարավային ռազմածակատի գերագույն իրամանատարն ու դիկտատորը: Նա գործում անդամ էր նաեւ Իթթիհատ պարտիայի գերագույն ղեկավար հնգյակի (Էնվեր, Թալեթ, Ջեմալ, դոկտոր Նազըմ եւ դոկտոր Բեհաէդդին Շաքիր), որոնք հղացան 20-րդ դարի առաջին ցեղասպանության՝ Հայ ազգի բնաջնջման հրեշտային գաղափարն ու սահնրոկեցուցիչ դաժանությամբ ու բժախնդիր հետեւողականությամբ իրագործեցին այն...

Ջեմալը իր հուշերում զուր ջանքեր է թափում ընթերցողին համոզելու, որ իբր ինքը մեղսակից չէ եւ պատասխանատու չէ Հայկական կոտորածների համար:

Պատմությունը արդեն ասել է իր ծանրակշիռ խոսքը: Ջեմալը, Վերոհիշյալ հնգյակի անդամների, Էր ընդհանրապես Իթթիհատի ղեկավար վերնախավի հետ համահավասար պատասխանատվություն է կրում մեկ ու կես միլիոնից ավել հայերի ոչնչացման համար: Դեռ ավելին... Ջեմալը պատասխանատու է նաեւ Արաբ ժողովրդի դեմ գործած իր հրեշավոր չարագործությունների՝ սպանությունների եւ տեղահանությունների համար: Իզուր չէ, որ Արաբները Ջեմալին համարում են իրենց առաջին դահիճը...

Բազմաթիվ արաբներ հաստատում են, որ միլիոնավոր տարագրված հայության կմախքացած բեկորներ, մեծ մասամբ տարեց կանայք եւ փոքրահասակ մանկուկներ, որոնք իրաշքով ողջ մնալով մի կերպ հասել էին հարավ, այսինքն Ջեմալի դիկտատուրայի սահմանները՝ Կիլիկիայից մինչեւ Բաղդատ, Ռիֆայից մինչեւ Տեր-Չօր, Ջեմալ փաշայի գիտությանը ու նրա

անմիջական հրամանով կամ հովանավորությամբ տանջման արվեցին կամ ուղղակի կոտորվեցին: Եւ այդ Ձեռնարկ, այդ հայակեր բորենին, այդ արյունակոյակ դահճապետը դեռ հանդգնություն ու կլտիություն ունեցավ (յուրայինները անշուշտ կասեին անխոհեմություն ունեցավ) Քաբուլից Մոսկվայի վրայով Անգարա գնալիս, կանգ առնել հայաշատ Թիֆլիսում ու ափաշկարա, իր հարյուր հազարավոր զոհերի հարազատների ու ազգակիցների աչքի առաջ քեֆ քաշել ու անհոգաբար զվարճանալ շքեղ ու հյուրասեր մայրաքաղաքի ընծեռնած հաճույքներով...

Բնականաբար Ձեռնալի այդ վարմունքը թիֆլիսաբնակ հայերի մեջ պիտի առաջ բերեր վիրավորանքի, նվաստացման, մանավանդ, վրիժառության զգացումներ...

Շատ հայրենասերներ ատամ էին կրճտացնում, բայց վախենում էին խոսել, հրապարակորեն արտահայտել իրենց զգացումները...

Ինձ խոտորջուրցի ընկերներից մեկը այդ օրերին ինձ գրած նամակում ասում էր.

- Ինչ է, այդ հայակեր զագանը մեր ժողովրդին իրոք մեռած էր կարծում... թե՛, արժանապատվությունից ու արիությունից բոլորովին զուրկ ու... մի գուցե, երբ ֆունկիլոպիորում նստած առատ սեղանի շուրջը քեֆ էր անում իր արբանյակների հետ մայելով ներքեւ, հայաշատ Թիֆլիսի վրա, մտքի մեջ ցինկիկաբար ծիծաղում էր հայության վրա...

Գաղտնիք չէ, որ այդ ատենները, այն ամենը ինչ որ թեկուզ հեռվից դիպչում էր Թուրքիային, հիշեցնում էր կոտորածները, Հայերի ինքնապաշտպանողական կռիվները, ընդհանրապես թուրքական բարբարոսությունները՝ խիստ հետապնդվում էր մեր իշխանությունների կողմից ու որակավորվում էր որպես «հակահեղափոխություն»...

Մերոնք ամեն կերպ հաճոյանում ու սիրաշահում էին Քեռակական Թուրքիային, նրան ցույց էին տալիս խոշոր բարոյական, ռազմական եւ նյութական օգնություն՝ այդ հայակեր փաշաներին համարելով իրենց հավատարիմ ու անկեղծ բարեկեամբներ...

Նրանց համարելով մուսուլմանական արեւելքի հեղափոխության ու նույնիսկ սովետականացման ռահվիրաները...

Հետագա տարիների դեպքերը ցույց տվին այդ քաղաքականության ամբողջ սնանկությունն ու նրա վնասակարությունը Սովետական երկրի համար... Ինչպես հաստատված է բազմաթիվ փաստերով, մեր նեղ օրերին՝ Հայրենական պատերազմի առաջին տարիներին, Քեռակական Թուրքիան, որպես դաշնակից ու բարեկամ պետություն ոչ միայն մեզ չօգնեց, այլ ընդհակառակը շեշտված թշնամական դիրք էր բռնել եւ ավելի նպաստավոր ոմնեցնտի էր սպասում, որպեսզի մեր վրա հարձակվի...

Դրա համար էլ մեր երկիրը ստիպված էր Թուրքական սահմանի վրա միլիոնավոր զորք պահել: Ինչ կասկած, որ եթե այդ զորքը գտնվեր գերմանական ծակատում, պատերազմը ավելի քիչ զոհերով եւ ավելի շուտ կվերջանար: Իսկ պատերազմը վերջանալուց հետո էլ Թուրքիան անմիջապես երկու ոտքով կանգնեց հակասովետական պլատֆորմի վրա եւ իր բոլոր հնարավորությունները տրամադրեց հակասովետական խմբավորման...

(Այդ ամենից հետո սովետական քաղաքացին իրավամբ տարակուսանքով է հետեւում ներկայիս դեպի նույն Թուրքիան տարվող սիրաշահելու եւ հանդյանայու քաղաքականության... Միտքե անցյալի դառն փորձը անօգուտ է անցել մեր դիվանագիտության համար...):

Թե ինչիտ հիման վրա 1920-ական թվականներին մեր դիվանագիտությունը թուրք արյունակակալ ֆեոդալ փաշաներից սպասում էր արմատական հեղափոխություն՝ մնում է հանելուկ...

Այս ամենը ղեկավարներին քաջ հայտնի էր, որ Քեռակը եւ իր փաշակոմիսարները (պիտի վերիիշել որ Քեռակը, անշուշտ մեր դիվանագետներին խաբելու համար, առ ժամանակ իր մինիստրներից կոչում էր

«կոմիսարներ») ձեռքն ընկած թուրք կոմունիստներին ամենայն դաժանությամբ սպանում էին... Չէտ որ թուրքական կոմպարտիան Քեռակական Թուրքիայում մինչեւ այսօր էլ դեռ մի օր օրինականացած չի ու նույն դրագոնական միջոցներով հալածվում է... Չէտ որ մեր դիվանագետներին լավ հայտնի էր, որ ժամանակավորապես գրաված Ալեքսանդրապոլում, արդեն սովետական հայ բնակչության՝ սովետական քաղաքացիների, վերաբերմամբ Քեռակ փաշայի հրամանով կատարվում էին նույն կոտորածները եւ ջարդը, ինչ որ կատարել էին նրա նախորդները՝ Մուլթան Համիդը ու Իթթիհադը...

Արդյոք այդ քաղաքական աննախընթաց կուրություն էր, բոլշևիկյան դասակարգային-հեղափոխական զգոնության բացարձակ բթացում էր, թետ մի ավելի սարսափելի հանցավոր բան... Այդ, անշուշտ մի օր կպարզի անաչառ պատմությունը... Իսկ մենք միայն այդ փաստը արձանագրեցինք, ցույց տալու համար, թե այն ժամանակ գոյություն ունեցող քաղաքական պայմաններում որքա՜ն վտանգավոր էր դառնում Ձեռնալի փաշայի նման նշանավոր թուրքական գործիչի սպանությունը, եւ որպիսի՜ խիստ ճնշումների տեղիք պիտի տար այն...

Այսուհանդերձ այդ ամենը շատ լավ գիտեցալով հանդերձ, եղան անձնագոհ մարդիկ, որոնք արհամարիելով ամեն վտանգ ու դժվարություն, անվախորեն կազմակերպեցին ու աննախընթաց համահանակությամբ ու խիզախությամբ իրագործեցին Հայ ժողովրդի մեծագույն դահիճներից մեկի սպանությունը, հենց Չեկայի քթի տակ...

Որովհետեւ Ձեռնալի սպանությունը սերտ առնչություն ունի խոտորջուրցիների հետ, անհրաժեշտ է մի քանի խոսք ասել նրանց մասին եւ պարզել, թե ինչուտ հատկապես նրանց վիճակվեց այդ սպանությունը: Խոտորջուր գյուղախումբը գտնվում էր պատմական Տայոց Աշխարհի մեջ, ըստ օսմանյան պետական վարչական բաժանման՝ Երզրումի վիլայեթի Կիսկինի կազայում: Խոտորջուրի ձորը սկսում է ճորոխ գետի ավից եւ մոտ 25 կիլոմետր երկարությամբ վերջանում 3937 մետր բարձրություն ունեցող Քաջքարի լեռնագագաթով, որի վրայից պարզ եղանակին բացվում էին սքանչելի համայնապատկերներ դեպի Սեւ ծովը, Կովկասյան լեռնաշղթան ու Մասիսը: Խոտորջուրի գյուղերը փռվել էին ճորոխի ձախ վտակի՝ Խոտորջուրի գեղաղիոր ավերին, սաղարթավոր ու մշտադալար փշատերեւ ամտառներով ու մրգառատ պարտեզներով շրջապատված:

Աննկարագրելի գեղեցիկ էր այդ լեռնաշխարհի բնությունը, ինչպես ասվում է՝ անմահական օդ ու ջրով... Հողը շատ բարեբեր էր եւ շատ լավ մշակվում էր: Մերթաբուհարածային ու դաշտային գոտիներում ստացվում էր երկու բերք, բայց հողը շատ սակավ լինելու պատճառով ստացված բերքը չէր կարող լրիվ բավարարել խոտորջուրցու զարգացած, բարձր կենսաակարողակի պահանջներն ու, մանավանդ, պետական ծանր տուրքերի վճարումը...

Դրա հետեւանքով էլ տղամարդիկ համարյա անխոր պատանեկան հասակից սկսած, ստիպված էին դիմելու պանդխտության՝ արտագնա աշխատանքի հասույթով ծածկելու իրենց ընտանիքի բյուջեի բացը: Ընդհանրապես արտագնացությունը խոտորջուրի համար դարձել էր արհեստ... Խոտորջուրցիների ամենախոշոր պանդխտավայրը Թիֆլիսն էր, որտեղ հարյուրավոր խոտորջուրցիներ սերնդից-սերունդ բացառապես զբաղվելով հացագործությամբ, գրավել էին տեղի հացի շուկան եւ հռչակվել էին, որպես հացաթխման անգերազանցելի վարպետներ: (Ձարմանալի գուգադիաթյունը մը: Հայկական ուրիշ լեռնաշխարհի մը պանդխտներն ալ Սասունցիները, վարպետ հացթուխի նույն այդ մենամարդիք ձեռք բերած էին այլ քաղաքի մը մեջ, Հայեա, ուր դեռ կը շարունակվի անոնց հանրավը:)

Պանդուխտ խոտորջուրցին գալով Թիֆլիս, իր տեսակետից մի գերագույն նպատակ էր հետապնդում՝ մոռանալով իր անձնական ամեն տեսան հաճույքներ, երկու-երեք տարի օր ու գիշեր տընաբան աշխատելով ու ծայրահեղ խնայողությամբ կոպեկ առ կոպեկ դրամ վաստակել, որպեսզի կարողանա վերադառնալ

հայրենի գյուղը, եւ միայն այնտեղ, իր ընտանիքի հետ միասին, բնության հրաշագեղ գրկում մարդավայել կյանք վայելել զոնե մի տարի... Դետո վերակսել, եւ այդպէս, տարիներով...

Այդ նպատակից ելնելով էլ խոտորջուրցին Թիֆլիսում, մինչեւ Առաջին Զամաշխարհային Պատերազմի օրերը, իրեն մեկուսացած էր պահում տեղական կյանքից եւ, ընդհանրապէս չէր խառնվում ազգային-հասարակական կյանքին...

Ինչպէս ամբողջ հայ աշխատավոր ժողովուրդը, խոտորջուրցին էլ անխաղճորէն կապած էր իր ծննդավայրի հետ, իր տան ու դռան հետ, իր մի կտոր հացի հետ... Զայրենյաց սերը գերագույն պաշտամունք էր դարձել խոտորջուրցու համար. այդ սիրո համար էլ նա կորցրեց իր ընտանիքը...

Խոտորջուրցին, զոնե նրա մեծեմասնությունը, լիակատար հնարավորություն ուներ իր ընտանիքը օր առաջ տեղափոխել Ռուսաստանի սահմանները, որով խուսափած կլինէր 1915 թվի Մեծ Եղեռնից, որին համարյա ամբողջովին զոհ գնաց խոտորջուրցուն մնացած ժողովուրդը... Բայց ծննդավայրի սերը արգելեց արտագաղթը... Իհարկե կային նաեւ այլ պատճառներ, որոնցից կարելորդ այն էր, որ խոտորջուրցին հավատում էր, որ Թուրքիան վերջ ի վերջո կարթնանա ու կվերածնվի, քաղաքակիրթ երկիր կդառնա, եւ իրենք էլ դէն շարունակ պանդխտության ցուպը, տեղում կգտնեն իրենց հանապաղորդ հացը... Այդպէս էին գուշակում... Ուտմ մտքից կանցներ այնպիսի դիվային ելք, ինչպիսին Մեծ Եղեռնը եղավ...

1914-ի աշնանը, երբ Թուրքիան հարձակվեց Ռուսաստանի վրա, խոտորջուրցի տղամարդկանց մեծագույն մասը գտնվում էր Ռուսաստանում, ապահով դրության մեջ: Թիֆլիսաբնակ խոտորջուրցիները ավելի մոտ լինելով ռազմաճակատին, անձկանոք ու սհով հետեւում էին զարգացող դեպքերին, որոնք օրըստօրէ հայերի համար չարագուշակ ընթացք էին ստանում...

Նրանք լավ գիտէին, որ բոլոր ռուս-թուրքական պատերազմները անցյալում, այսպէս թե այնպէս, ուղեկցվել են կամ վերջացել են հայկական կտորածներով... Քրիստոնյա Ռուսաստանից պարտված Թուրքիան իր պարտության վրէժը առնում էր իր հպատակ խաղաղ քրիստոնյա ժողովրդից...

Այնուհանդերձ թիֆլիսաբնակ խոտորջուրցիները լավատես էին իրենց ծննդավայրի վերաբերմամբ... Նախ՝ նրանք հավատացած էին, որ խոտորջուրը մոտ լինելով սահմանին, հզոր ռուսական բանակից անմիջապէս կզրավվի ու այդպէսով կազատագրվի...

Երկրորդ անցյալում խոտորջուրցիները միշտ հավատարիմ են եղել դեպի Թուրքիան, եղել են շեշտված պարկեշտ հպատակներ Օսմանյան կայսրության, միշտ պահպանողական դիրք են գրավել համահայկական-համազգային հարցերում, հեղափոխական գործիչներ չեն տվել, ֆիդայական շարժումները չեն քափանցել խոտորջուր, տվյալ ժամանակում էլ թաղանակելով իրենց պարկեշտ ընթացքը Թուրքիայի հանդեպ, դեմ էին կանավորությանը եւ, ընդհանրապէս հակաթուրքական որեւէ գործնությանը, հետուաբար թուրքական իշխանությունները որեւէ առիթ կամ պատճառ չունէին դեպի խոտորջուրը կասկածանքով եւ անվստահությամբ վերաբերվելու եւ ճնշումների դիմելու...

Երրորդ՝ իրենք ԼԻՆԵԼՈՎ ԿԱԹՈՒԿՆԵՐ, համոզված էին, եւ հույս ունէին, որ Ավստրո-Յունգարական կաթոլիկ կայսր ֆրանց ժոզեֆը, Գերմանական կաթոլիկ թագավորի իշխանները եւ զորավարները, եւ մասնավանդ, Գրոմի սրբազան Պապը երբեք չէին թույլ տալու, որ կործանվեր Արեւելքում գտնվող «Պատիկ Զոմը», ինչպէս սիրում էին կաթոլիկական շրջաններում անվանել խոտորջուրը:

Նրանք նույնիսկ Ռուսաստանի հայ կաթոլիկների առաջնորդի միջոցով դիմեցին Զոմի Բենեդիկտոս 15-րդ Պապին, աղերսելով օգնություն ցույց տալ Թուրքիայում գտնվող իրենց ընտանիքներին, իմանալ նրանց վիճակը, սակայն Պապի քարտուղար կարդինալ Գասպարիից ստացված պատասխանի մեջ բացի Պապի հղած առաքելական օրհնություններից

ուրիշ սփոփիչ ոչինչ չկար... (տես «Արմյանակի Կետնիկ» 1916 թիվ 2, երես 16) Տարված այդպիսի սին հույսերով, թիֆլիսաբնակ խոտորջուրցիները շարունակում էին պատերազմի հետեւանքով աշխուժացած իրենց գործերը, դրան հավաքում, հուսալով՝ որ երբ ռուսը գրավի իրենց գյուղը, իրենք հարուստ բեռներով պիտի վերադառնան խոտորջուր, ուրախացնելու ընտանիքներին...

Վերջապէս անցան ոգելորդության ու հուսահատության դժվարին եւ հոգեմաշ ամիսները եւ փետրվարյան մի պատմական օր գրավվեց Էրզրումը, խոտորջուրը... Անհուն ցնծության ու ուրախության մեջ խոտորջուրցիների ներկայացուցիչները մեկնեցին խոտորջուր...

Եվ ինչ գտան, ինչ տեսան... Իրենց բարեշէն ու բազմամարդ գյուղը, ճիշտ ու զվարթ խոտորջուրը, Զայոց Աշխարհի գարդ ու պարծանք խոտորջուրը չկար այլեւս... Այն ամայի էր ու անմարդաբնակ, կիսակործան ու թափուր... 7-8 հազար բնակչությունից ոչ ոք չկար այնտեղ: Միայն հարեւան Զունուտ թուրք գյուղում մնացել էին երեք խոտորջուրցի երեխաներ, որոնց տարադրությունից փրկել էր Ալի բեգ Սինաս Օռլին, որը մեծ ազնվություն ու համարձակություն է ունեցել նյութական խոշոր գոհողություններով եւ նույնիսկ իր կյանքը վտանգի ենթարկելով՝ պանդխտության մեջ գտնվող իր հայ բարեկամների գավակներին ապաստան տալ իր մոտ, պահել իբրեւ իր հարազատ զավակներ... (Շար. 1)

Համառոտ ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Էդ. Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)

(Շար. Նախորդ համարից) (8)

ԴՊՐՈՑ

Դեռեւս XVII դ. 30-ական թթ. Խաչատուր Կեսարացու նախածեռնությամբ Նոր Ջուղայում բացվել է հայկական բարձրագույն դպրոց (կոչվել է նաեւ «համալսարան» կամ «ճեմարան»: Դասավանդվել են քերականություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ, աստվածաբանություն, երաժշտություն: Իրանահայ համայնքում դպրոցներ գոյություն են ունեցել բոլոր եկեղեցիներին կից, սակայն առաջին աշխարհիկ դպրոցները ստեղծվել են XIX դ. կեսին (1833)-ին Նոր Ջուղայում, 1835-ին Թավրիզում, 1870-ին Թեհրանում): Առավել հայտնի են Նոյր Ջուղայի, «Ազգային կենտրոնական (1880), Թավրիզի «Արամյան» (1835), «Յայկազյան» (1882), «Թեմական կենտրոնական» (1909), Թեհրանի «Յայկազյան» (1870) դպրոցները:

1936-ին Ռեզա-շահ Փահրավիի կառավարությունը, վարելով «իրանացման» քաղաքականություն, փակել է բոլոր ազգային դպրոցները: Դրանք վերաբացվել են միայն 1942-43-ին, իսկ Թավրիզի հայկական դպրոցները պարապմունքները վերակսել են միայն 1956-57-ին: Վերաբացումից հետո դպրոցներին պարտադրվել է պարսկերենով դասավանդում: Տնօրենները եւ ուսուցիչները մեծ մասը պարսիկներ էին: Զայոց լեզուն, պատմությունը եւ կրոնը դասավանդվել են ծրագրից դուրս:

1978-79-ի հեղափոխությունից հետո Թեհրանի կրթական եւ ընդհանուր վարչության 1981-ի

շրջաբերականով բոլոր դպրոցները հայտարարվել են պետական: Սակայն կրոնական փոքրամասնություններն ունեն իրենց հատուկ դպրոցները, որտեղ այլ դպրոցների հետ համանման պայմաններ ունենալուց բացի, ծրագրից դուրս մայրենի լեզվով ուսուցանվում են լեզու և գրականություն, կրոնի դաստիարակություն, և ոչ մուսուլման աշակերտները կարող են նաև սովորել մյուս դպրոցներում:

Կրոնական փոքրամասնություններն ունեն մտորմանկապարտեզներ, ծերանոցներ և այլն, որոնց սեփականությունը ամբողջովին պատկանում է նրանց:

Վերացվել է նաև հաշմանդամների և հարկազանցողների իրավունքներն իր դպրոցների նկատմամբ: Հայկական դպրոցների մանկավարժական կազմը փոխարինվել է պարսիկ ուսուցչուհիներով ու տեսուչներով վերջիններիս վերապահելով դպրոցների տնօրինությունը: Սակայն 2000-2001 ուսումնական տարվանից իվեր նշանակվում են նաև հայ տեսուչներ և փոխտեսուչներ: Թեհրանի հայկական ուսուցիչների աջակցությամբ և թեմի առաջնորդի ղեկավարությամբ 1981-1982 թթ. ուս. տարում Առաջնորդարանում հիմնվել են հայերեն դասընթացներ, որոնց նյութական ծախսերն ամբողջությամբ ստանձնել է «Հայ կին միությունը»:

Երկրի տարբեր նահանգներում հայերենի կրթության վիճակը որոշակիորեն զանազանվում է թեհրանի ազգային դպրոցներից: Շահինշահի քաղաքի կրթության վարչությունը արտոնել է հայկական դպրոցներին պաշտոնական ծրագրի մասնամանրամասն (բացի կրոնի համար մախսատեսված ժամերից) ներառել նաև շաբաթական 3 ժամ հայոց լեզվի և գրականության հավելյալ ժամեր: Ռաշտ քաղաքի «Մ. Ա. Հորդանանյան» ազգային դպրոցի և մանկապարտեզում (բացի կրոնի համար մախսատեսված ժամերից) ներառել նաև շաբաթական 3 ժամ հայոց լեզվի և գրականության հավելյալ ժամեր: Ռաշտ քաղաքի «Մ. Ա. Հորդանանյան» ազգային դպրոցի և մանկապարտեզում (բացի կրոնի համար մախսատեսված ժամերից) ներառել նաև շաբաթական 3 ժամ հայոց լեզվի և գրականության հավելյալ ժամեր: Ռաշտ քաղաքի «Մ. Ա. Հորդանանյան» ազգային դպրոցի և մանկապարտեզում (բացի կրոնի համար մախսատեսված ժամերից) ներառել նաև շաբաթական 3 ժամ հայոց լեզվի և գրականության հավելյալ ժամեր: Ռաշտ քաղաքի «Մ. Ա. Հորդանանյան» ազգային դպրոցի և մանկապարտեզում (բացի կրոնի համար մախսատեսված ժամերից) ներառել նաև շաբաթական 3 ժամ հայոց լեզվի և գրականության հավելյալ ժամեր:

2000 թ. Ի-ում գործող ազգային դպրոցներից 25-ը և մանկապարտեզներից 3-ը կենտրոնացված են թեհրանում:

Ս. Ստեփանոս եկեղեցուն կից ՍԱՄՅԱՆ ԴԴՐՈՑ, հիմնավորվել է 1831-ին Նոր Ջուղայում առաջնորդ Կարապետ Եպիսկոպոս Ջուղայեցու ջանքերով, որը կոչվել է «Ամենափրկչյան ճեմարան», դպրոցը 1833 թ. շարունակում է մարդասերմակ Գրիգոր Սամյանի միխատությունը և կոչվել նրա անունով: 1831 թ. (2.5 ամիս միայն) և 1834-36-ին դպրոցում ուսուցչություն է արել Մետրոպ թաղապետը: 1837-ին փակվել է: Այս դպրոցը շարունակել է իր գոյությունը մինչև 1853-ը, երբ Սամյան առևտրական տունը սնանկացել է: Աշակերտների թիվը եղել է մոտ 80: Գլխավոր առարկաներն էին հայոց լեզու, թվաբանություն, վայելչագրություն: Ուսուցանել են նաև աշխարհագրություն, անգլերեն և պարսկերեն: Տարբեր տարիներին դպրոցում դասավանդվել են Գեղորդ վարդապետ Տեր Հովսեփյանը, Տեր Ավետիս Տեր Ղազարյանը, Տեր Ստեփանոս Հարությունյանը, Կարապետ Ջորաբյանը, Տեր Հովսեփ Տեր Գրիգորյանը և ուրիշները:

ԱՐԱՄՅԱՆ ԴԴՐՈՑ, երկսեռ, ազգային դպրոց (ութամյա): Հիմնվել է 1835-ին Թավրիզի Ղալա թաղամասի եկեղեցու բակում Սահակ Եպիսկոպոս Սաթունյանի նախաձեռնությամբ: Մինչև 1875-ը կոչվել է Ներսիսյան (Ներսես Շնորհալու անունով), հետագայում իրանահայ մեծահարուստ Արմանյանի անունով, որը մեծ օժանդակություն է ցույց տվել դպրոցին: Սկզբում արական դպրոց էր, 1887-ին տեղափոխվելով Թումանյանցիների միջոցներով կառուցված «Ամնայան դպրոցի շենքը և միանալով օրհորդաց դպրոցի հետ, դարձել է երկսեռ և կոչվել «Արամյան-Ամնայան» ազգային դպրոց: 1852-ին ունեցել է 60 աշակերտ, հաջորդ տարի 100:

Հետագայում աշակերտների թիվը հասել է 240-260-ի: Դասավանդվել են հայերեն, ռուսերեն, Ֆրանսերեն, պարսկերեն լեզուներ և այլ առարկաներ: Ուսուցումը հայերեն էր:

Դպրոցի առաջին տեսուչը Տեր Հովսեփ քահանան էր, ուսուցիչները Հակոբ վարժապետ Եղիազարյանը, Սարտիրոս վարժապետ Փափագյանը (հետագայում Մերովք քահանա Փափագյան) և ուրիշներ: Տարբեր տարիների տեսուչներ են եղել՝ Սամվել Գյուլդարյանը, Աբեղնազով Ալեքսանյանը, Վահան Բժշկյանը, Ալեքսան Տեր Վարդանյանը, Միքայել Ստեփանյանը և ուրիշներ: Դասավանդել են Րաֆֆին Հրայրյան Ածառյանը, հայագետ-լեզվաբան Մուշեղ Մուշեղյանը, իրանահայ անվանի կրթական գործիչներ- Հովսեփ Գասպարյանը, Հայրապետ Պանիրյանը, Տիգրան Գալֆայանը, Լեւոն Գրիգորյանը, Հայկ Աճեմյանը և ուրիշներ: Դպրոցը գործել է մինչև 1936-ը, երբ Ռեզա շահ Փահլավի հրամանով բոլոր ազգային դպրոցները փակվել են:

ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐԻՆՅԱՆ ԴԴՐՈՑ, տարրական, ապա միջնակարգ իգական ազգային դպրոց Նուրայում: Հիմնադրվել է 1858-ին Ս. Կատարինյան մենաստանի «Կուսանաց վանքի» տարածքում, ճավայաբնակ Մաուկ Հորդանանի նյութական միջոցներով (թեմակալ առաջնորդ Թադեոս արքեպիսկոպոս Բենիագարյանի առաջարկությամբ): 1900-ին Մադաքի Եպիսկոպոս Տերունյանի ջանքերով Նոյր Ջուղայում, հնդկաստանում ճավայում կազմակերպված հանգանակության շնորհիվ Նոր Ջուղայի Չարսու թաղում կառուցվել է «Ս. Կատարինյան օրհորդաց դպրոցի» նոր շենք: 1892-ին միացել է Ազգային Կենտրոնականին և կոչվել Նոր Ջուղայի ազգային երկսեռ դպրոց: 1936-ին պետականացվել է, 1955-ին կրկին ազգայնացվել: Բացման ժամանակ աշակերտուհիների թիվը 28 էր:

ՀԱՅՎԱԶՅԱՆ ԴԴՐՈՑ, միջնակարգ, երկսեռ ազգային դպրոց: Հիմնավորվել է 1878-ին Թեհրանի «Դարվազե Ղազվին» թաղամասում, արևմտահայ մտավորականներ պոլսեցի Միքայել Մարգարյան, տաճկահայ Կարապետ Բազիկանյանի և Դամասկոսի Հովսեփ Գասպարյանի նախաձեռնությամբ: Սկզբնական շրջանում գտնվել է եկեղեցու բակում, 1884-ին կառուցվել է առանձին շենք 1903-ին մասնաճյուղ է բացել Հասանաբաղ թաղամասում: Մինչև 1906-07 թթ. եղել է արական, այնուհետև՝ երկսեռ: 1932-33 թթ. նախկին Նոր Ջուղայեցի և Հնդկաստանի բնակիչ, բարերար Դավիթ Դավթյանի նյութական օժանդակությամբ կառուցվեց այժմյան «Դավթյան» նոր շենքը (Միրզաբուլեթ խան), որը 1942 թվականից հետո կոչվեց Քուշեշ-Դավթյան: Դասավանդվել են հայոց լեզու և գրականություն, պատմություն, պարսկերեն, Ֆրանսերեն և այլ անհրաժեշտ առարկաները: Ուսուցումը մինչև ազգային դպրոցների փակումը (1936) եղել է հայերենով, վերաբեցումից հետո պարսկերենով, իսկ հայերենն ուսումնասիրվել է պետական ծրագրից դուրս արտաժամյա:

ԿԱՅՎԱԶՅԱՆ ԴԴՐՈՑ, տարրական, ապա միջնակարգ, երկսեռ ազգային դպրոց: Հիմնվել է 1875-ին Թավրիզի Լիլիավա թաղամասում «Հայկազյան» և «Սեւան» առևտրական ընկերությունների կողմից: 1879-ին այստեղ հիմնվել է նաև օրհորդաց դպրոց: 1895-ին այդ դպրոցները տեղափոխվել են Թումանյան եղբայրների կառուցած նոր եռահարկ շենքը (13 դասարաններով և սրահով), որը կոչվել է նրանց վաղամեռի քրոջ Թամարի անունով: Այդ թվականից էլ սկսել է կոչվել «Հայկազյան-Թամարյան»: XX դ. խլգրին Ի-ի միակ միջնակարգ ուսումնական հաստատությունն էր: 1936-ին բոլոր ազգային դպրոցների նման փակվել է. սկսել է գործել միայն 1956-57 ուս. տարում: Այդ շրջանից սկսած Թավրիզի ազգային դպրոցները կոչվել են «Հայկազյան-Թամարյան-Մ. Սահակյան» տարրական և միջնակարգ երկսեռ դպրոցներ (կրթության նախարարությունում հայտնի էին «Ասար» անունով: Դասավանդվել են բնական, հասարակական և տեխնիկական գիտություններ, լեզուներ, մեծ

ուշադրություն է դարձվել մանկավարժությանն ու հովերանությանը: Մինչև 1936-ը ուսուցումը եղել է հայերեն, այնուհետև պարսկերեն: Հայոց լեզուն եւ կրոնը դասավանդվել են արտաժամյա, պետական ծրագրից դուրս: Տարբեր տարիների «Հայկազյան-Թամարյան» դպրոցի տեսուչներ են եղել Հովնան Դավթյանը, Գաբրիել Պապյանը, Սուսանյանը, Տիգրան Ռաշմաճյանը, Սիբայել Չարաֆյանը, Նիկոլ Սարգսյանը, Կարապետ Պիոնյանը, Գասպար Հակոբյանը, Արմենակ ԱՖթանդիբեյանը: 50-ական թթ. դպրոցի վերաբացումից հետո պատական տեսուչներ նշանակվել են միայն պարսիկներ: XIX դ. վերջին- XX դ. խկզբին դպրոցում դասավանդել են իշխան Հովսեփ Արղունյանը, Սարգիս Օհանջանյանը, Խաչատուր Գրիգորյանը, Մելքոն Հակոբյանը, Սարգիս Հարությունյանը, Մուշեղ Հովհաննիսյանը, Հայկ Աճեմյանը, Արամ Ալշուջյանը եւ ուրիշներ:

ԱԶԳԱՅԻՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ, տարրական, ապա միջնակարգ ազգային դպրոց: Հիմնադրվել է 1880-ին Նոր Ջուղայի Չարսու թաղամասում, Իրանահնդկական թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Հովհաննիսյանի նախաձեռնությամբ: Միավորել է մինչ այդ Նոր Ջուղայում գործող երեք դպրոցները Հ. Աբգարյանի հիմնած «Հայկական հայրենասիրական» Սարիամ Հարությունյանի եւ Սարգար Սուքիասյանի հիմնած դպրոցները: 1892-ին ընդգրկել է նաեւ Կատարախնյան իգական դպրոցը կոչվելով «Նոր Ջուղայի Ազգային երկսեռ դպրոց»: Սակայն Ազգային կենտրոնականը հիմնականում եղել է արական տարրական դպրոց: 1936-ին, երբ ազգային դպրոցները պետականացվել են, վերոհիշյալ դպրոցները սկսել են կոչվել «Շահ Աբբաս Մեծ»: 1970-70 թթ. Նոր Ջուղայի բոլոր ազգային դպրոցներում աշակերտության թիվը հասել է 1454-ի, ուսուցչուհիները 100-ի (38-ը հայ, 61-թ պարսիկ): Մինչեւ 1936-ը դասավանդումը եղել է հայերեն, պետական ծրագրի մտցնելուց հետո մայրենի լեզուն սահմանափակվել է: Դասավանդվել են հայերեն, հայոց պատմություն, կրոն, անգլերեն, Ֆրանսերեն, պարսկերեն, հանրապաշխիվ, երկրաչափություն, Ֆիզիկա, քիմիա, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, երաժշտություն, նկարչություն են: Մինչեւ XIX դ. վերջը Նոր Ջուղայի ազգային դպրոցների ղեկավարումն իրականացրել է Առաջնորդը կամ հոգաբարձությունը, հետագայում հետուկ նշանակված տեսուչներ (բոլոր դպրոցները ղեկավարվել են մեկ տեսչի կողմից): 1892-1936-ին տեսչուհիներն են եղել Մարտիրոս Հարությունյանը, Տեր Վարդան քահանա Վարդանյանը, Բազրատ վարդապետ Վարդապայանը, Արմենակ Գերասիմյանը, Հայկ ժամկոչյանը, Ռուբեն Աբրահամյանը, Տեր Գարեգին քահանա Կիրակոսյանը, Ալյան Շահնազարյանը, Հակոբ Տեր Հակոբյանը, Սկրտիչ Աբգարյանը: 1936-ից հետո տեսուչի պաշտոնում նշանակվել են պարսիկներ, 1955-ից երբեմն նաեւ հայեր: Դպրոցներն ունեցել են զարդարան, երգչախումբ, պարախումբ, կազմակերպել են թատերական ներկայացումներ:

ԳԵՎՈՐԳ ՔԱՆԱՆՅԱՆ ԴՊՐՈՑ, միջնակարգ ազգային դպրոց: Հիմնադրվել է 1901-1905-ին Նոր Ջուղայի Չարսու թաղամասում, Վարվառե Քանանյանի բարերարությամբ, ի հիշատակ ամուսնու՝ Լազարյան Եսմարանի նախկին տեսուչ Գեղորգ Քանանյանի: 1901-ին բացվել է ցայսօր գործում է Գեղորգ Քանանյանի ազգային մանկապարտեզը: 1970-80 ուս. տարում միջնակարգի երկսեռ աշակերտության թիվը 229 էր, ուսուցիչների թիվը 34 (որից հայ 8-ը):

ԹԵՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ, միջնակարգ, երկսեռ, ազգային դպրոց: Հիմնադրվել է 1909-ին Թավրիզում, թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր Սկրտչյանի ջանքերով, կովկասաբնակ բարերարներ Ջոհրաբյանների կտակով եւ ժողովրդական հանգանակությամբ գոյացած միջոցներով: Գործել է մինչեւ 1936 թ., տվել է հարյուրավոր շրջանավարտներ: Այստեղ են իրենց կրթությունը շարունակել «Արամյան-Աճեմյան» եւ

«Հայկազյան-Թամարյան» տարրական դպրոցների աշակերտ-ուհիները: Դասավանդվել են լեզուներ (հայերեն, պարսկերեն, անգլերեն), հայերենի քերականություն, հայոց պատմություն, մաթեմատիկա, քիմիա, Ֆիզիկա եւ այլ առարկաներ: Ուսուցումը հայերեն էր: Որպես տեսուչ աշխատել են Երիցյանը, Հովնան Դավթյանը, Կարապետ Պիոնյանը, Գասպար Հակոբյանը, Հայրապետ Պանիրյանը, կարճ ժամանակով 1917-19-ին, Հ. Ճերմակը եւ Մամբրե Սկրյանը: Դասավանդել են Հ. Աճառյանը, Տեր Հակոբյանը (Հ. Իրազեկ), Ալեգսան Հովհաննիսյանը, Լեւոն Գրիգորյանը, Վարոս Բաթրայանը, Հովսեփ Թադևոսյանը, Եր. ԱՖթանդիբեյանը, Սոֆի Ամատունի, Ավարդ Տեր Ստեփանյանը, Արամ Ալշուջյանը եւ ուրիշներ:


ՄՈՒՇԵՇ-ԴԱՎԹՅԱՆ, միջնակարգ, երկսեռ, կիսապետական դպրոց թեհրանում: Նախապես բացվել է Հայկազյան դպրոցի մասնաճյուղ Քուշեշ անունով: 1932-33-ին հնդկահայ Դավիթ Դավթյանի միջոցներով վերակառուցվել է կոչվել է նրա անունով Դավթյան: 1957-58-ին հայ բնակչության միջոցներով կառուցվել է դպրոցի նոր քառահարկ, որն իր ուսումնական հարմարություններով լավագույնն է քաղաքում: 1954-ին բարերար Սարգար Սարգսյանի նվիրատվությամբ կառուցվել է Սարիամյան դպրոցը, որի նորակառույց շենք են տեղափոխվել Քուշեշ-Դավթյան դպրոցի իգական դպրոցները (այժմ չի աշխատում) 1971 թ. կառուցվեց Քուշեշ (Վաչե Հովսեփյան) տարրական դպրոցը, Ս. Աստվածածին եկեղեցու հարեանությամբ: Դասավանդվում էին պետական ծրագրով նախատեսված հանրակրթական առարկաներ պարսկերեն լեզվով: Հայոց լեզուն եւ կրոնը դասավանդվում են արտաժամյա: Ուսուցիչները հիմնականում պարսիկներ են, կան նաեւ հայեր:

ԹՈՒՆՅԱՆ դպրոցներ, հայկական միջնակարգ կրթական հաստատություն թեհրանում: Հիմնադրվել է 1957-ին: 1968-ին Գ. Կյուլայեմկյան հիմնադրության նպատակով կառուցվել է նոր շենք: Այժմ (2000 թ.) ունի նաեւ ուղեցույց բաժանմունք (3 տարի) եւ միասեռ (օրիորդաց) է: Հիմնադրման տարում ունեցել է 140 աշակերտ, 1999 թ.-ին 368 տարր. եւ 444 ուղեցույց:

ԻՍՐԱՅԵԼ ՍԱՐԱԿՅԱՆ ԴՊՐՈՑ, տարրական եւ ուղեցույց, երկսեռ ազգային դպրոց: Հիմնադրվել է 1958-ին թեհրանի Հեշմաթե թաղամասում սարմաստեցի ազգային բարերար Իսրայել Սահակյանի միջոցներով: Տարրական բաժնի հիմնադիրը եւ արտոնատերն էր Չիբրայել Սահակյանը, աղջիկների բաժնի՝ Դանիել Սահակյանը: 1958-ի նոյեմբերի 29-ին դպրոցի եռահարկ շենքի բացումից հետո այստեղ է փոխադրվել 1948-ից Հեշմաթե թաղամասում գործող Շահազիզ դպրոցն իր երկսեռ աշակերտներով: Դասավանդումը կատարվում է պետական ծրագրով (հանրակրթական առարկաները պարսկերեն լեզվով, հայերենը արտաժամյա):

Այժմ թեհրանում աշխատում են հատելյալ հայկական դպրոցները Քուշեշ-Դավթյան հիմն. (1870), Քուշեշ մանկապարտեզ (1942), Սահակյան (1958), Ռոստոմ (1952), Արաքս (1954), Նայրի օրիորդաց (1955) տղայոց (1969), Արարատ (1956), Թունյան (1957), Գուլբենկյան (1966), Գոհար (1949), Ալիշան (1962), Նոր Անի (1963), Շանթ (1964), Իրան Փորուզ (1966), Թովմասյան (1970), Սարի Սամուկյան, Սողոմոնյան, Սարիամ հաստատություն, Ահարոնյան եւ Սասուն մանկապարտեզներ:

(Շաղ. 8)



Ապրիլի հայկական տոները

ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

Համադրեց եղ. Գերմանիկ

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդի տոնակատարությունն սկսվում է Մեծ Պասի վերջին կիրակի օրը: Այդ տոնի քրիստոնեական նշանակությունը կապված է Քրիստոսի երուսաղեմ վերադարձի հետ: Երբ նա անցնելով փողոցներով, մտնում է եկեղեցի, ժողովուրդը հանդիսավոր ընդունելություն է կազմակերպում, դիմավորում են արմավենու, ձիթենու եւ ուռենու ծաղկած ճյուղերով: Նրանք այդ կանաչ ուտերը փռում են այն ճանապարհի վրա, որտեղով անցնում է Քրիստոսը: Ըստ Ավետարանի Քրիստոսը փառքից անտարբեր մտնում է եկեղեցի եւ չվանից պատրաստված զարագանով մաքրում է տաճարը ընչաքաղցությունից: Նա նշանադրում է վերուստ հաստատված կարգը եւ ցույց է տալիս, որ տաճարը Աստծո տունն է եւ պետք է լինի միայն աղոտքի ու քավատանքի օրրան: Այդտեղ չպետք է ապաստան գտնեն շահամուլները, խարդախներն ու ագահ նյութապաշտները:

Ծաղկազարդի տոնը նշվում է զարնանը՝ մարտի 22-ից մինչեւ 27-ը ընկած ժամանակահատվածում: Հայաստանի եկեղեցիները այդ օրը զարդարում են եղեւնու եւ ուռենու ճյուղերով, որոնք Ս. Պատարագի ժամանակ օրհնում են բաժանում են ժողովրդին: Սա է ծաղկազարդ տոնի ավետարանական նշանակությունը, սակայն այս ծիսակատարության արմատներն ավելի վաղ ծագում ունեն եւ հասնում են մինչեւ հայ ժողովրդի հեթանոսական շրջանը: Այդ տոնը զարնան դիմավորումն է, ամեն ինչ վերածնվում է, արթնանում մայրանում: Հարսնանում է նաեւ բնությունը, հատիկը հողում ուռչում է, հաղթականորեն պայթում, փոքրիկ կանաչ ծիլը դուրս է հանում իր գլխիկը, ծառի ճյուղերը կենարար ավիշով են լցնում, գունափոխվում, բողբոջներով պատվում: Գարնան պաշտամունքը Հայաստանում առնչվում է դիցաբանական հերոս Արա Գեղեցիկի անվան հետ, այն բովանդակում է զարնանային զարթոնքը եւ հանդիսանում է արթնացող ուժերի գեղարվեստական մարմնացումը: Միաժամանակ այդ հերոսի կերպարում փոխկապակցված արտահայտվում են մեռնողի եւ հարության առնողի, մահվան ու ծննդի միմյանցով պայմանավորված հավիտենական կապը: Եվ այդպես բնությունը հոլովում է իր հավեժ կրկնվող երգը, որն ամեն անգամ հնչում է նորովի ու ավելի իմաստավորված ու վերափոխված բովանդակությամբ:

Ավետարանական բացատրությունը նույնպես այլաբանորեն է ներկայացնում մարդու հոգեկան վերափոխության խորը իմաստը: Զարթոնք է ապրում կյանքը, մարդիկ հոգեպես մաքրվում, վերափոխվում են, վերածնվում, ազնվանում: Ծաղկազարդը հոգեկան զարթոնքի, գեղեցիկի, բարության հաղթանակի անվերապահ ավետումն է, տոն, որ միշտ հայ մարդու հետ է:

Այդ օրերին, հին Հայաստանում թույլատրվում էր նորահարսերի այցելությունը իրենց ծնողներին, նշանված աղջիկները փեսացուի հարազատներից ստանում էին նվերներ՝ գույնզգույն գլխանոցներ, ժամյակներ, զարդարուն մուներ եւ այլն: Սովորաբար նշանդրեքի եւ պակադրության արարողությունները նույնպես կատարվում էին այդ օրերին: Ծաղկազարդի ծիսական կերակուրը խաշած ցորենն է, հատիկ են սարքում, հետը խառնում շաքարեղենի մանրուք, ընկույզ, նուշ, քիչմիշ: Բոլոր ճաշերի, կերակուրների մեջ առատորեն օգտագործում են մեղրեղենը, ցորենից ածիկ են պատրաստում, ուտում են նաեւ ձու, մեղրով ու դոշաբով ձվածեղ եւ այլն:

Եկեղեցում վաղ առավոտյան ժամերգություն է սկսվում: Մարդիկ իրար հետ ողջագուրվում են բացականչելով. «Քրիստոս հարյավ է ի մեռելոց», պատասխանը լինում է. «Ձե՛զի մե՛զի մեծ Ավետիս»: Խաչվելուց երեք օր հետո Քրիստոսը ձերբագատվում է մարմնական կապանքներից եւ նրա հոգին 40 օր շրջում է երկրում, որից հետո համբարձվում է երկինք, ուստի եւ լավատեսությունը, պայծառատեսությունը հատուկ են այս տոնին: Մարդը բնության հետ հոգեկան վերածնունդ է ապրում, հավատում է հոգեւոր կյանքին, կենսունակ բանականության հաղթանակին: Չար ուժերը սպասում են իրենց, մերժվում կյանքի բարի, կենսունակ ուժերի կողմից: Զատիկը շարժական տոն է, նշվում է Մեծ Պասից անմիջապես հետո, մարտի 21-ից մինչեւ ապրիլի 26-ը ընկած ժամանակահատվածում, ժամանակի իմաստով կայուն չէ եւ շարժվում է 35 օրերի միջեւ: Ավագ շաբաթ օրը ճրագալույցն է, այդ օրը երեկոյան վերջանում է Մեծ Պահքը, որը լուծվում է ձվով, մեկ տարեկան գառան մսից պատրաստված կերակուրներով, յուղեղեն թխվածքներով: Ահա թե ինչ է ասված հնագույն գրություններում. «Զմեզ քո սեղանիդ վրայ կերակրեցիր ջանքելով նաչիի՝ մսով օրհնության եւ անուշ գինով ու բանիմաց ուրախության հոգվիդ եւ մարմնիդ»: Այդ օրը զատկական գառն տանում են եկեղեցի, օրհնել են տալիս եւ հենց տեղում էլ մորթում: Եկեղեցու մոտակայքում օջախ են վառում, եփում եւ բաժանում են ժողովրդին, իրենք նույնպես առատորեն վայելում են «մատաղը»: Գառը օրհնում են «Կանոն գառին Զատիկի եւ վարդավառի» տաղով: Գրագալույցի օրը յուրաքանչյուր մարդ Զատիկի տոնը անց է կացնում իր տանը: Առատ սեղանի շուրջը բոլորում են տան անդամները, ձվով, հաց ու աղով փակում են Մեծ Պասը եւ սկսվում են Ս. Զատիկի բարենաղթանքները: Մեծահասակների օրհնանքներից հետո, տնեցիները առատորեն վայելում են տոնական սեղանի հարուստ բարիքները: Զատիկի տոնակատարության ժողովրդական սովորությունների մեջ, մնացել է ձու ներկելու արարողությունն ու ձվախաղը: Հին Հայաստանում ձուն հիմնականում ներկում էին որդան կարմիրով: Տաթեւացին այդ մասին նշում է, ճրագալույցի շաբաթ օրը «ձու ներկենք կարմիր» եւ թե «միայն ի տոնի Զատիկիս ներկենք ձու»: Տաթեւացին միաժամանակ տալիս է այդ սովորության խորհրդապաշտական նշանակությունը՝ ձուն նմանեցնելով «բոլոր աշխարհին»՝ տիեզերքին, որի կեղեւը դա երկինքն է, ներսի մաշկը՝ օդը, սպիտակուցը՝ ջուրը, իսկ դեղնուցը դա երկիրն է:

Կարմիր ներկը, ըստ երգնկացու, նշանակում է, որ ողջ աշխարհը Քրիստոսի արյանք է վերաշինվել, իսկ մարդկությունը նրա կյանքի ու արյան գնով է վերակենդանացել ու փրկվել: Քրիստոսը ինքնակամ խաչվել էր, որպեսզի փրկի մարդկությունը: Նա անմռունչ իր ուսերի վրա էր վերցրել բոլոր մարդկանց մեղքերի խաչը: Նա այդ արել էր կամովին «մի մեծ գաղափարի, մի մեծ ուխտի հաղթանակի համար»: Ահա այդ գոհաբերության խորհուրդի վրա է քրիստոնեական ուսմունքը: Քրիստոսն այդ գոհաբերությունը կատարում է գիտակցված ու նպատակահղված, չարաչարանքների ու մահվան գնով, սակայն դա անում է ողջ մարդկության բարոյական ազատագրման, բոլորի մեղքերի քավության ու թողության համար: Սովորաբար այդ օրը մատաղ են անում, իսկ ծիսական սեղանը ծանրաբեռնված է լինում խաշած ու խորոված մեկ տարեկան գառան մսի կերակուրներով, օգտագործում են նաեւ որսի միս եւ տնային բազմաթիվ թռչուններ, մասնաորապես հաճելի են ուտելի կանաչատեսակներն ու մրգեղենը, առատորեն հոսում է նաեւ կարմիր գինին:

ՉԱՏԻԿԻ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐՆ ԵՆ.

ԱԿԵԼՈՒԿՈՎ ՈՍՊԱՊՈՒՐ, ՍԱԼՈՐԱԶՐՈՎ ՍԻՍԵՐՎՊՈՒՐ, ՍԻՍԵՐՈՎ ՉԱԿԱՐԱՊՈՒՐ, ԵՂԻՆՋԱՊՈՒՐ, ՍՆԿԱՊՈՒՐ, ՓԻՓԵՐԹՈՎ ԱՊՈՒՐ, ՀԱԶԱՐԻՑ ԹԱՐՈՒԼԵ, ԴԱՆԴՈՒՌՈՎ ՍԱԼԱԹ, ՉԿՈՎ ԿԱՐՏՈՒՅԻՆ ՍԱԼԱԹ, ՍՊԻՏԱԿ ԲՈՂՎՈՎ ԵՎ ՍՏԵՊԻՆՈՎ ՍԱԼԱԹ, ԽԱՌԸ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՍԱԼԱԹ, ԹԹՈՒ ԿԱՐԱՍԲՈՎ ԱՂՑԱՆ, ՇՐԵՇՏԻ ԱՂՑԱՆ, ՓԻՓԵՐԹԻ ԱՂՑԱՆ, ԾՆԵՔԵԿԻ ԱՂՑԱՆ, ԹԱՐԽՈՒՆՈՎ ՊԻՆԴ ԽԱՇԱԾ ՁՈՒ, ՍՏԵՊԻՆՈՎ ԱՊԻՏԱԿ ԼՈՐԻ, ՉԿՈՎ ԾՆԵՔԵԿ, ԸՆԿՈՒՅՁՈՎ ԾՆԵՔԵԿ, ԹԹՎԱՍԵՐՈՎ ՍՈՒՆԿ, ԸՆԿՈՒՅՁՈՎ ՍՊԱՆԱԽ, ԱՊԱԿԱԾ ՍԻՔԵՆ, ՏԱՊԱԿԱԾ ԲՈՒՏԻ, ՊԱՆՐՈՎ ԷՐԻՇՏԱ ՓԼՈՎ, ՈՍԱՏԻ ՍԱԾՈՒԿՈՎ ԷՐԻՇՏԱ ՓԼԱՎ, ՉԱԾԵՂՈՎ ԷՐԻՇՏԱ ՓԼԱՎ, ՍՊԱՆԱԽՈՎ ՓԼԱՎ, ԼՈՒԻԿՈՎ ՓԼԱՎ, ԳԱՌԱՆ ԴԱՓԱՄԱ, ՀՈՎԿԱԿԱՆ ԽՈՐԿՈՒ, ԽԱՇԼԱՄԱՍ, ԱՊԱԿԱԾ ԳԱՌԱՆ ԲՈՒՐ, ԳԱՌԱՆ ՄՍՈՎ ՔԱՇՈՎԻ, ԱՐՑԱՆԻ ԳԱԹԱ, ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՒԼԵՏ, ՇԱՔԱՐԱՊԱՏ ԿԱՂԻՆ, ՆՈՒՇ-ՀԱՅ:

հատրնտիր, Թեհրան, 1968, առաջաբան, էջ 6-7, քաղված է ՀՀ ԳԱԱ "Պատմա-բանասիրական հանդեսից", Երևան, 1988, թիվ 2, էջ 149/

53. Հայ բանաստեղծությունը դա ժողովրդի հոգեկոր ճիչն է: Մի ժողովրդի, որ երկար ժամանակ, առանց որելև հարուցող պատճառի, տանջվել է անզգամ ու գարշելի մարդկանց ճիրաններում: Մի ժողովուրդ, որ դեռես հազար վեց հարյուր տարի առաջ գրում էր այսօրվա իր տառերով եւ ուներ հարուստ մշակույթ եւ գրականություն:

54. Հայ բանաստեղծությունը պզնիվ է ու մարդասիրական: "Օտարությունը", "վիշտը", "մենակությունը" առանձնահատուկ տեղ են գրավում հայ բանաստեղծության մեջ: Հայ բանաստեղծությունը նորելուկ է: Նա ունի խոր արմատներ, իսկ հայ բանաստեղծը իր շրջապատի մարդկանց համար օտարոտի է, այլ ապրում է նրանց մեջ: Ասում են ամեն մի հայի մեջ մի բանաստեղծ է նստած: Այս խոսքի ճշմարտությունը մենք ընկալում ենք այդ ազգի անկեղծության մեջ:

55. Հայ բանաստեղծության մեջ մենք ակնատես ենք լինում պայքարի ու սխրանքների, տեղեկանում հայ ժողովրդի իղծերին ու ձգտումներին: Մի ժողովուրդ, որը լավ է ընթնում "սեր" եւ "մտերմություն" բառերի իմաստը: Մի ժողովուրդ, որ պատմության ընթացքում բոլոր անիրավությունները ճաշակելուց հետո պահպանել է իր ազգային նկարագիրը, մշակույթն ու բանահյուսությունը:

Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԿԱՆ-ԴԱՐՅԱՆ, Գ. ՎԱՂԱՆՅԱՆ

46. Որտեղ հայ բանաստեղծություն տեսնեք, մի պահ կանգ առեք եւ նախքան ընթերցելը մտովի պատկերացրեք տանջանք, գերություն, կրակ, արյուն, պայքար եւ, վերջապես, դրանց հետ միաժամանակ ամենահիասքանչ ազատություն բառերը: Որովիետեւ ամեն մի հայ բանաստեղծության մեջ դուք կզգայք նրա հորինողի կյանքի խոր եւ միեւնոյն ժամանակ անաղարտ ու ինքնատիպ ընկալումը:

47. Որտեղ հայ բանաստեղծություն տեսնեք, կանգ առեք, խորհրդածությամբ մտածեք, որովիետեւ հայ բանաստեղծությունը կանգնած է իր դարավոր անցյալի փառապանծ ու անսասան պատվանդանի վրա:

48. Որտեղ հայ բանաստեղծություն տեսնեք, կանգ առեք, խորհրդածությամբ մտածեք, եւ հետո հպարտությամբ լցված ընթերցեք այն: Որովիետեւ հայ ժողովուրդը միշտ էլ մշակույթի եւ գիտության գովերգողն է եղել եւ նրանց զարգացման համար չի խնայել իր ուժերը: Չէ՞ որ դարերի խորքից մեզ հասած "Աստվածաշնչի" հայերեն սքանչելի թարգմանությունը ստացել է "Թարգմանությունների թագուհու" համբավը:

49. Հայ բանաստեղծությունը, ամբողջությամբ վերցված, մարդկային խոհերի, հույզերի ու զգացմունքների գեղարվեստական կախարհիչ արտահայտությունն է:

50. Հայ բանաստեղծությունը երբեք կյանքի մակերեսին թրթռացող խոսք չէ, որովիետեւ հայ բանաստեղծը կյանքին խորաթափանց նայելուց զատ ուրիշ նպատակ չունի:

51. Եթե այցի ես գնում հայ բանաստեղծությանը, նախքան գնալը հաշվի առ, դու ներս ես մտնելու ամբողջ աշխարհով մեկ սփռված հինգ միլիոնանոց հայ ժողովրդի լեզվի եւ գրականության տաճարը: Ուրեմն զգույշ, որ մշակույթի եւ գրականության վեհությունն ու փառքը չդողացնեն սիրտդ եւ զարմանքը չպատի քեզ:

52. Հայ բանաստեղծությունը դա տառապյալ, սակայն մի առաջադեմ ժողովրդի բանաստեղծություն է: Մի ժողովուրդ, որ խոհուն է եւ ստեղծագործ: Մի ժողովուրդ, որ նվիրական կյանքն ու արվեստը երբեք թույլ չեն տվել, որ "սնանկությունը" ոտք դնի իրենց վսեմության սեմին:

ԹԵՄՈՒՐ
Պարսիկ
գրականագետ
/"Հանմաստեյն անդուհ", "Վշտի դյուբազներգություն", Հայ բանաստեղծության

Մխիթար Գոշ
(12-դ.)

16. Առիծը, Արջը եւ Գայլը
Առիծը, արջը եւ գայլը ընկերանալով, ասում են. -Ինչու է լինենք հումակեր, բռնենք մի մարդ, որ իրենց սովորութեան համաձայն որսից մեզ համար կերակուր պատրաստի: Եւ բռնելով մէկին, դարձրին իրենց խոհարար: Մարդը սրտնեղելով, իւրաքանչիւր կողմում դրեց սեպեր, եւ առիծի ու միւսներին ասաց. -Օգնեցեք ինձ կիսելու փայտը, դրեք ձեր ձեռքերը ճերքի մէջ եւ ձգեցեք: Եւ երբ դրեցին, դուրս քաշեց սեպերը, ու զազանները մնացին բռնած: Ապա վերցնելով կացինը, սկսեց ջարդել նրան, ասելով. -Սկսենք առիծից:

17. Ապաշխարող Գայլը
Գայլը ծերանալով, գնում է ոչխարի հոտի մօտ ու ասում. -Այժմ ապաշխարող եմ ձեզ վշտացրել, ուստի ուզում եմ գալ ու ձեր տան աւլողը դառնալ, որպէսզի թողութեան արժանանամ, պահպանեն ձեր մանուկներին ուրիշ գայլերից: Եւ ուրախանալով, ոչխարները շներին ասում են. -Այլեւս մի հալածեք նրան: Գայլը մնում է այդտեղ, համբերում մինչեւ մեծանուն են գառները, ապա սկսում է հոշտել եւ ուտել նրանց: Ի վերջոյ, շատերը նկատելով այդ, սատկեցնում են նրան: Առակս այսպիսի խրատ է տալիս. շուտ չհաւատալ չարագործին:

18. Թագաւորի երեք երագը
Մի թագաւոր երագ տեսաւ, որ անձրելի փոխարեն երկնքից աղւես էր տեղում: Նա հրաման արձակեց. -Ով երագս բացատրի, հազար դահեկան կտամ նրան: Մի աղքատ մարդ լսելով, գնում ասում է. -Եթէ երեք օր ինձ ժամանակ տաս, կը մեկնեմ երագդ:

Եւ նա գնալով անպատ, շրջում էր այնտեղ ու մտածում: Մի վիշապ, տեսնելով տարակուսած մարդուն, ասաց.

-Ինձ ի՞նչ կը տաս, եթէ թագաւորի երազը յայտնենք եզ:

Նա պատասխանում է.

-Ինչ որ խօստացաւ թագաւորը, կեսը թեզ կը տամ: Ասում է.

-Գնա եւ յայտնիր, թէ ժամանակն է, այսուհետեւ մարդիկ նենգաւոր եւ խաբէբա կը լինեն արևելսի մասն:

Եւ մարդը գնալով, թագաւորին ասաց: Բացատրութիւնը դուր եկաւ նրան, որովհետեւ իսկապէս մարդիկ նման էին արևելսի: Թագաւորը տեց նրան խօստացած դահեկանները: Եւ մարդը խաբէց վիշտապին ու չվերադարձաւ նրա մօտ:

Ժամանակ անց, մի ուրիշ երազ տեսաւ թագաւորը, որ անձրեւի փոխարէն երկնքից ոչխար էր տեղում: Հրամայեց կանչել այն մարդուն, որ, ինչպէս առաջին անգամ, մէկին երազը: Նա թագաւորից նոյն բանն է խնդրում, բայց իբրեւ ապերախտ ամաչում է գնալ վիշապի մօտ: Եւ այնուամենայնիւ գնալով, պաղատագին ասաց.

-Սեղա՛ թեզ, յայտնիր երկրերդ երազի միտքը, եւ թեզ կը տամ առաջին ու երկրորդ պարթս:

Վիշապը առանց մարդու պարտագանցութիւնը յիշելու, ասաց.

-Գնա եւ յայտնիր, թէ ժամանակ է գալու, եւ եկել է արդէն, որ մարդիկ ոչխարի նման պարզամիտ պիտի լինեն:

Եւ գնալով, մարդը մէկնեց երազը: Այս մէկնութիւնը եւս հաւանելով, Թագաւորտ դարձեալ տեց նրան հացար դահեկան: Վերցնելով դրամը, մարդը տարաւ, հանձնեց վշապին:

Դրանից յետոյ թագաւորը մի ուրիշ երազ եւս տեսաւ, որ անձրեւի փոխարէն երկնքից էր տեղում: Հրամայեց նորից կանչել այն մարդուն, որպէսզի դա եւս մէկնի: Եւ մարդը խնդրելով նոյն ժամանակը, գնում է վիշապի մօտ, որն անմիջապէս, իբրեւ բարեկամի, մէկնում է երազը, ասելով.

-Գնա եւ յայտնիր, թէ ժամանակն է, որ մարդիկ դառնան բռնաւորներ ու սուսերաւորներ:

Եւ սովորելով այդ, մարդը մտածեց. «Ինչո՞ւ այժմ թողնեն վիշապի հազր դահեկանը եւ կամ ինչո՞ւ միւս հինգ հարիւրը եւս բերեն, աւելի լաւ է, խփեն վիշապին ու սատկեցնեն»: Եւ օրնաց խփել վիշապին, բայց այդ նրան չյաջողեց վիշապը խոյս տեց նրանից: Եւ մարդը զոջալով մտածում է. «Չարիք գործեցի. միւս անգամ, երբ հարկ լինի, էլ ինչպէ՞ս կը գամ սրա մօտ»: Տեսնելով, որ մարդը փաշմանել է, վիշապն ասաց նրան.

-Ո՛վ մարդ, դու մի տրտմիր, քանզի անձիդ թելադրանքով ոչինչ չես արել, այլ արել ես ժամանակի բերումով: Խաբելդ կեղծաւորների ժամանակ եղաւ, զոջալդ ու հազարդահեկան տալդ՝ միամիտների, իսկ ինձ խփելդ բռնաւորների ժամանակ:

19.Փղի Որդին Իմաստասիրութեան Աշակերտ

Փղին իր որդուն հանձնեց Պլատոնին՝ իմաստասիրութիւն ուսանելու: Եւ ուսուցիչ հանձնարարեց աշակերտին չոքել լսարանում, իսկ նա չկարողացաւ: Պատիւրեց նաեւ որ գլուխը խորնարհի գետնին, այդ եւս չկարողացաւ: Պլատոնը ետ վերադարձրեց նրան հորը եւ ասաց.

-Վայել է, որ քո որդին թագաւորի պալատում լինի՝ միշտ ոտքի կանգնած, եւ ոչ իմ լսատանում, քանի որ ոչ նստել կարող է եւ ոչ գլուխ խոնարհել:

20.Ուղտն Ու Նրա Խնամողը

Ուղտը հարուած ստացաւ իր խնամողից եւ բարկանալով ասաց.

-Տես, երբ տրտում եմ լինում, ինձ մի խփիր, թէ չէ՛ կը մեռնես իմ ձեռքով:

Խնամողը հարցրեց.

-Ի՞նչ նշանով է արտայայտում քո տրտութիւնը, իմանամ, որ չխփեմ:

-Երբ տեսնես ներքին շրջունքս կախաւծ, - ասում է ուղտը, - եւ քայլելուս ժամանակ չլսես ոտքերիս ձայն, ուրեմն տրտում եմ:

-Դու միշտ այդ ես, - պատասխանեց խնամողը, - էլ ինչպէ՞ս իմանամ:

Չարաբարոնների մասին է առկա, որանք միշտ բարկացած են եւ երբեմն պատրակում են, թէ այդպիսին են տրտութեան պատճառով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

-Առածն անխոցելի է:

-Առանց սիրո սիրտ չկա:

-Առաջ ասեղը թեզ խրիր, հետո մախաթը ուրիշին:

-Առյուծի պատիվ էին տալիս, էշ դուրս եկավ:

-Ասա ո՛վ է ընկերդ, ասեմ ո՛վ ես դու:

-Աստուց խնդրիր, բայց բահը ձեռքիցդ մի գցիր:

-Աստված սարը տեսնում է, ձյունը դնում:

-Աստված փլավն ո՞ւմ է տվել, ախորժակը՝ ո՞ւմ:

-Արագ եմ քայլում, ասում են՝ ծուռ է, կամաց եմ քայլում, ասում են՝ կույր է:

-Արգելված պտուղը համով կլինի:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

-Դարմանի տակի ջուր է:

-Երբ բախտը թեզանից երես է դարցրել, շիլա ուտելիս էլ ատամներդ կփշրվի:

-Եթէ էջը բեռանը չի մոտենում, բեռը մոտեցրու էշին:

-Եղբարությունը եղբարություն, հաշիվը՝ հաշիվ:

-Ես ամուսնացա հոնքերս ներկելու, ոչ թէ կարկատան անելու համար:

-Ես ասում եմ՝ արու է, նա ասում է՝ կթիր:

-Երբ դուռ չունես, դռնապանն ինչի՞ն է պետք:

-Երբ շատրվանի շիթը շատ է բարձրանում, սկսում է խոնարհվել ցած:

-Երկու տանտիկին ունեցող տան կեղտը մարդու ծնկներին կհասնի:

-Երկու սուր մի պատյանում չես տեղավորի:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԺԱՄԻՆ

Մի անգամ ուսուցիչը դիմեց Վարդանիկին.

- Ընչավոր առարկայի անուն ասա:

- Է՞ծ:

- Ապրես, իսկ հիմա անշունչ առարկայի անուն ասա:

- Սատկած է՞ծ, - պատասխանեց Վարդանիկը:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԺԱՄԻՆ

- Ինչի՞ մասին է «Շունն ու կատուն», - հարցնում է ուսուցչուհին:

- Կատվի աֆերիստության ու շան հարիֆության, - պատասխանում է Վարդանիկը:

ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ

- Հինգին գումարած հինգ, ինչի՞ն է հավասար, - Վարդանիկին է դիմում ուսուցչուհին:

- Տասնհինգ:

- Հիմար, այդ խելքով ի՞նչ ես դառնալու:

- Բուֆետշիկ:

ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒԹՅԱՆ...

Խնդիրը լուծելուց հետո Մարգոն դիմեց աշակերտներին.

- Վերջապէս մենք գտանք, որ «իքս»-ը հավասար է զրոյի:

- Հրքը ինչի՞ իզուր տեղը եղքան չարչրվանք,-
դժգոհում է Վարդանիկը:

ՔԻՄԻԱՅԻ ԺԱՄԻՆ
- Թթուների ի՞նչ տեսակներ գիտես,- Վարդանիկին է
դիմում ուսուցչուհին:
- Կաղամբի թթու, վարունգի թթու, զոխի թթու, կանաչ
պոմիդորի թթու,- պատասխանեց Վարդանիկը:

2- Արդեօք գիտե՞ք

Բանջարեղենի խաշելիս այն լցոք ոչ թե սառը, այլ
եռացրած ջրի մեջ: Այդպես վիտամինները երկար են
պահպանում: Վիտամինների մեծ մասը փոխանցում
է եփուկին, դրա համար այն մի թափեք, աշխատեք
օգտագործել սուպերի կամ պատրաստման համար:

Հաստ եւ ոչ երկար արմատապտղով գազարը
աւելի հիւթառատ է: Դրանից ստացւում է լաւ հիւթ,
կարելի է օգտագործել սալաթում, հում վիճակում
որպէս գարնիր (ճաշալուաց), ինչպէս նաեւ թթու դնել:

Այլ տեսիկ գազաները պահանջում են երկարատեւ
ջերմային մշակում, ուստի խորհուրդ չի տրւում խաշել,
եփել կամ նրմաից պատրաստել կոտլրտ,
զապեկանկա (թխածքաճաշ), պուդինգ (քաղցր
թխածք):

3. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1- Անայուն տուն է,
Անծածկ տանիք,
Տունն այդ աշխարհներ
Տեղ կանի:


2- Նախշուն կարպետ՝
Ծայրեր չունի,
Հալվել ունի
Օալվել չունի:

3- Մի տուն ունեն,
Սյուն չունի:
Տունն է երկու թռչունի.
Մեկը՝ տաք,
Մեկը՝ պաղուկ,
Պահմտոցի են խաղում:

4- Արծաթ ցանած կապույտ դաշտով
Ո՞վ է անցնում գործն իր պաշտող.
Մերթ նիհար է,
Մերթ՝ կլորիկ,
Հաճելի բոլոր-բոլորին:

5- Մի դաշտ կա՝ համրել չի լինի,
Քարերը համրել չի լինի:

Պատասխան. -1-Երկինք 2-Գիշերային երկինք
3-Երկինք,արեւ, լուսին 4-Երկինք,լուսին,աստղեր
5-Երկինք,աստղեր



Առողջապահական

ԱՌԱՒԵԼ ՏԱՐԱԾԻԱԾ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ՂԵՂԱԲՈՅՆԵՐՈՎ

ԽՐՈՆԻԿԱԿԱՆ ՀԵՊԱՏԻՏ

Առաջացման պատճառը մեծ մասամբ չբուժված
կամ կիսաբուժված դեղնախտն է: Սակայն այն կարող է
լինել նաեւ այլ հիւանդութիւնների (մալարիա,
սիֆիլիս, պալարախտ) բարդութիւն: Տարբեր տեսակի
թունաւորումներն ու խրոնիկական դեղնախտը եւս
կարող են պատճառ հանդիսանալ այս հիւանդութեան
զարգացման համար:

Հիւանդութիւնը բնորոշում է լեարդի հիւսւածքի
տարբեր հատւածներում չդադարող բորբոքումներով:
Ախտանշանները սկզբնական շրջանում թոյլ են
արտայայտւած: Հիւանդը զանգուտում է լեարդի,
երբեմն էլ փայծաղի շրջանում բուք ցաւի
զգացողութեամբ: Ախորժակը վատանում է, լեարդը
մեծանում է եւ ամրանում: Մեծանում է նաեւ փայծաղը:
Հիւանդութեան բարդութեան դէպքում առաջանում է
սակաւարիւնութիւն, եւ հիւանդը նիհարում է: Արեան
կենսաբանական քննութիւնը այս դէպքում ցոյց է
տալիս լեարդի գործառնական խանգարումներ:

Հիւանդութիւնը ընթանում է պարբերաբար
կրկնող ռեմիսիայի շրջաններով: Բարդութիւններն են
լեարդի ցիրոզը զուգակցւած լեղապարկի եւ
լեղածորանի բորբոքումներով: Ենթա բուժման
դէպքում հիւանդը կը լաւանայ:

Բուժումը: Դիետայի խիստ պահպանում:

Օգտագործող դեղաբոյսերի բուժական
հաւաքները տարբեր են պայմանաւորւած
հիւանդութեան ախտանշաններով:

Լ.Գեղծի	Լեղարտադրութիւն
կարգաւորող հաւաք.	
Կատախտ (արմատ)	20 գ
Ալոնցնի (ծաղիկներ)	20 գ
Անանուխ (տերեւներ)	30 գ
Ծորենի (կեղեւ)	30 գ
Պատրաստել ջրաթուրմ: խմել մէկ բաժակ, կուն- կուն, առաւօտեան եւ երեկոյեան:	

II.Լեղամուղ ազդեցութիւն ունեցող բուժական
հաւաքներ.

1.Ջրառույտ (տերեւներ)	30 գ
Օշինդր դառը (վերգետնեայ մաս)	30 գ
Անանուխ (տերեւներ)	30 գ
Երկու ճաշի գոլալ հումքը եփել մէկ բաժակ ջրում: խմել 3-5 ճաշիգոլալ, ուտելուց կէս ժամ առաջ:	

2.Եղերդակ սովարական (արմատ)	40 գ
Անթառամ (ծաղիկներ)	40 գ
Խատուտիկ դեղատու (արմատ)	40 գ
Պատրաստել ջրաթուրմ եւ խմել 1/3 բաժակ, օրական 3 անգամ, սոված ժամանակ:	

III.Եթէ հեպատիտը ուղեկցւում է լեարդի շրջանում
ցաւերով, խորհուրդ է տրւում օգտագործել հետեւեալ
հաւաքը.

Ծիծեռնախտ մեծ (վերգետնեայ մաս)	15 գ
Երիցուկ դեղատու (ծաղիկներ)	15 գ
Ջրառույտ (տերեւներ)	15 գ
Պատրաստել ջրաթուրմ, խմել առաւօտեան եւ երեկոյեան, ուտելուց մէկ ժամ յետոյ, մէկ բաժակ:	

IV.Կոլիտով ուղեկցուող հեպատիտների դէպքում
խորհուրդ է տրւում հետեւեալ հաւաքը.